№ 21 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 31 ՅՈՒՆՎԱՐԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 31 ՅՈՒՆՎԱՐԻ № 21

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում դրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ" Сергіевская ул., № 5
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ԽՄԲԱԳԻՐ՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆօն № 67.

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ **1912** Թ. ՀԱՄԱՐ

ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը՝ 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 2 ամսվանը՝ 2 ր., 1 ամսվանը 85 կ. և 15 կ. պօստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն, և միևնոյն ժամանակ 40 կ. նամակադրոշմ։

Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով:

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Ռոլիցիա և Այծեմնիկ Հախումեանները և Զարուհի ու Տիգրան Նազարեանները կսկիծով յայտարարում են ողբերգական մահը՝ առաջինների իրանց որդու և եղբօր, վերջինների իրանց սան՝ Մոսկվայի բարձրագոյն Տեխնիկական դպրոցի ուսանող

ԳԱՍՊԱՐ ՍԻՄԷՕՆԵԱՆ
ՀԱԽՈՒՄԵԱՆԻ

Թաղումը այսօր Մոսկվայում, իսկ հոգեհանգիստը այսօր, երեքշաբթի ՋԳՐԱՇԷՆԻ ս. Աւետեաց եկեղեցում ժամը 12-ին պատարագից յետոյ։
60. 1—1

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
ՀԻՆԳՇԱԲԹԻ, փետրվարի 2-ին
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ
Կը տայ ՀՐԱԺԵՇՏԻ ՎԵՐՋԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ
Կը ներկայացնէ
ՌՈՒԶԱՆ
Դրամա 5 արարուածով, Մուրացանի։
Մասնակցում են. տ. տ. Գուլազեան, Զաբէլ, Ժասմէն, Խանդանեան, Սիրանոյշ և Ցասմիկ, պ. պ. Աբելեան, Ալիխանեան II, Ազոյեան, Լաքս, Ղազարեան, Մամիկոնեան, Մանուէլեան, Միրզոյեան, Սեւումեան, Տէր-Առաքելեան, Շահխաթունի և ուր.։
Սկիզբն է երեկոյեան ժամը ճիշդ 8-ին։
Տեղերի գները աւելացված են։ Ռեժիսոր՝ ՍԵԽՈՒՄԵԱՆ
Վարչութեան հերթապահ անդամներ՝ Ք. Տէր-Սարգսեան, Գ. Երիցեան
(և.հ.) 58. 2—1

ԲԱԳՈՒ
ՑԻՐԿ-ԹԱՏՐՈՆ ԵՂԲ. ՆԻԿԻՏԻՆՆԵՐԻ
ՀԱՅ ԴՐԱՄԱՏԻԿ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ
ղեկավարութեամբ Ց. ԱԲԷԼԵԱՆԻ
Կը ներկայացնէ
ՇԱԲԱԹ, ՓԵՏՐՎԱՐԻ 4-ԻՆ
առաջին անգամ
ՄԻՐՐԱ ԷՖՐՈՍ Դրամա 5 արարուածով, Գործնի, Թարգմ. Վ. քահ. Տէր-Ղևոնդեանի
ԿԻՐԱԿԻ, ՓԵՏՐՎԱՐԻ 5-ԻՆ
Առաջին անգամ ՎԱՍՏԱԿԱՒՈՐԻ նոր դրաման
ՊԱՏՐԱՆՔՆԵՐ (ՄԵՌԵԱԼՆԵՐԸ ԽՕՍՈՒՄ ԵՆ)
Դրամա 4 արարուածով
Սկիզբը երեկոյեան ճիշդ ժամը 8-ին է։
3—1 61. (հ.) Ռեժիսոր՝ Ց. ԱԲԷԼԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Երեկոյթների կարգը ձմեռային սեզոնի մէջ
Երեքշաբթի օրերը.—Հայոց ներկայացում։ Զինւորական երաժշտութիւն։ Սազանդար։ ՊԱՐԵՐ։
Չորեքշաբթի օրերը. — Սինեմատոգրաֆ։ Լոտօ։
Հինգշաբթի օրերը.—Ռուսաց ներկայացում կամ զինւորական երաժշտութիւն։ Լոտօ։
Շաբաթ օրերը.—Սազանդար։ Լոտօ։
Կիրակի օրերը.—Սինեմատոգրաֆ։ Զինւորական երաժշտութիւն։ Լոտօ։
Հիւրերը՝ ըստ յանձնարարութեան՝ մուտքի համար վճարում են. երեքշաբթի, հինգշաբթի, շաբաթ և կիրակի օրերը—տղամարդիկ 1 ր., կանայք 50 կ., ուսանողները 25 կ.։ Չորեքշաբթի օրերը—տղամարդիկ 50 կ., կանայք և ուսանողները 25-ական կոպ.։
Այն հիւրերը, որոնք ներկայացման առմասկ ունեն վերցրած՝ կլուբ մտնելու համար վճարում են—տղամարդիկ 50 կ., կանայք և ուսանողները 25-ական կոպ.։
Ներկայացումների սկիզբը ժամը ճիշդ 8-ին երեկոյեան։
Սինեմատոգրաֆների սկիզբը ժամը 9-ին երեկոյեան։
(ե.) տռ. 994. 0—16

ԲԺԻՇԿ
Գր. ՄԱԿԱՐԵԱՆ
Ներքին եւ երեխայոց հիւանդութիւններ
Ընդունում է հիւանդներին իր նոր բնակարանում Գանովսկայա փողոց, տուն Սէյլանովի, № 18, տելեֆօն 615.
Առաւօտեան 12—1 ժամը
Երեկոյեան 5—6 ժամը
(ե.հ.կ.) տռ. 819. 100—57

100—93 662. տռ. (և. հ. կ.)

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ռուսաստանը կիրակի, յունվարի 29-ին, յիշեց այն չարաբաստ օրը, երբ նա կորցրեց իր մեծագոյն բանաստեղծին՝ Ալէքսանդր Պուշկինին։

Անակնկալ մահը հետեւանք էր ճակատագրական մի մենամարտի, որ վերջ դրեց Ռուսաստանի բանաստեղծական պարծանք կազմող տաղանդի կեանքին։

Եօթանասուն հինգ տարի է անցել այդ սև և տխրագգեաց օրից և մարդիկ այժմ, ինչպէս և այն ժամանակ, չեն կարողանում հաշտվել այն մեծ կորուստի հետ, որ պատճառեց պատմական մենամարտը։

Պուշկինը դեռ չէր վերջացրել իր ասելիքը։ Նա ստեղծագործում էր նորանոր գոհարներ և նրանցով անմահ և անջնջելի հարստութիւններ գանձում բանաստեղծական գրականութեան համար։

Մեծ բանաստեղծը իր ոգևորված և յուզալից գրական գործունէութեամբ մի այնպիսի թանգագին ժառանգութիւն է թողել, որ շատ և շատ սերունդների պէտք է հիացում և զմայլանք պատճառէ։

Պուշկինը չէր պատկանում որոշ կուսակցութեան և չունէր կազմակերպված քաղաքական և գրական դաւանանք։ Նա կրթված, խոհուն, ազատասէր, ոգևորվող, յափշտակվող մի անձ էր, ծարաւի հոգեկան ուժեղ յույզերի, կարօտ անհուն ոգևորութեան, ենթակայ բնութեան հրաշալիքների և հոգեկան զեղմունքների էլեքտրականացնող ներշնչումների։

Նա զգում էր բանաստեղծօրէն, ըմբռնում էր բանաստեղծօրէն և արտայայտում էր բանաստեղծօրէն։

Նրա երգերում և յագներգութիւններում խօսեց քաղաքացին, բարբառեց գիւղացին, թոթովեց մանուկը, գորովախօսեց մայրը և կինը, օրհնեց ծերունին, լացեց վշտահարը և ժպտաց դեռահաս պատանին ու կոյսը։

Նա երգեց բնութիւնը և մարդուն։ Նա պատկերացրեց պատմականը և ներկան։ Նա վերարտադրեց ժողովրդի աւանդութիւնների մէջ ապրող բանաստեղծական [illegible] տողերով. Նա վերցրեց ժողովրդական լեզուն և տուեց նոյն ժողովրդին հարազատ էութեամբ և իմաստով, բայց նուրբ մշակութեամբ, զուտ բանաստեղծական արտայայտութեամբ։

Պուշկինի աշխարհահայեացքը վէճի առարկայ եղաւ, բայց նրա բանաստեղծական քանքարը մնաց անվիճելի և անհերքելի։

Նա դարձաւ ժողովրդի սեփականութիւն։

Մասնաւորապէս մեզ կովկասցիներիս համար նա սիրելի է նաև իր այն բանաստեղծութիւններով, որ գրել է Կովկասում և Կովկասի մասին։

Հայ գրականութիւնը օգտվել է Պուշկինից և հայ բանաստեղծները գտնվել են նրա զօրաւոր ազդեցութեան տակ։

Ցարգանք մեծ բանաստեղծի անջնջելի յիշատակին։

Ա. Քալանթար

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻ ԾՈՒՐՋԸ

«Баку»-ի թղթակիցը հեռագրում է Պետերբուրգից. «Սենատում պահապան ժանդարմական օֆիցէրը Բոյլը տուեց պաշտպաններին բացատրվելու «Դաշնակցութիւն» կուսակցութեան գործի մէջ մեղադրվողների հետ, հրամայելով պահպաններին «бить по мордѣ». Նախագահը հրամայեց քննութիւն նշանակել, իսկ սենատ եկած ժանդարմական գեներալը հեռացրեց օֆիցէրին։ Վերջինս յանձնվում է դատարանին»։

«Рус. Слово» լրագրում կարդում ենք հետեւեալը.

«Սենատի կուլուարներում պտտվող լուրերի համեմատ, «Դաշնակցութեան» գործի վերաբերեալ վկաների ցուցմունքները նուիրված էին դաշնակցականների տէրրորիստական գործողութիւններին։ Սակայն դեռ հարցուփորձի չեն ենթարկվել այն վկաները, որոնց ցուցմունքները վերաբերվում են երկու մեղադրվողների դատաստանական պրակտիկայի մէջ չեղած մեղադրանքին։ Այդ ամբաստանեալները մեղադրվում են պրիստաւի օգնական Ֆէօդօրովի սպանութեան համար Շուշի քաղաքում, որի դիակը դեռ ևս չէ գտնված։ 1905 թուի երեկոյեան Ֆէօդօրովը դուրս գնաց տնից և այլ ևս չը վերադարձաւ։ Նրա ազգականները և տեղական ոստիկանական իշխանութիւնները այն համոզմունքը յայտնեցին, որ նա սպանվեց «Դաշնակցութիւն» կուսակցութեան դատավճռով։

«Միայն մի քանի տարուց յետոյ Շուշու հիւրանոցներից մէկի տէրը յիշեց, որ Ֆէօդօրովի անհետանալու նախընթաց օրը նրա հիւրանոցում Գ. Սայամով, այժմ մեղադրվող, բարձրաձայն յայտարարում՝ էր «Նորութիւն կիմանաք—կը սպանվի մի մարդ»։ Ֆէօդօրովի սպանութեան հետեւեալ գիշերը, նոյն հիւրանոցի տիրոջ խօսքով, Սայամովը հիւրանոց եկաւ արիւնաթաթախ, արիւնոտ խէնջալով և հետեւեալ օրը նոյն հիւրանոցում ցոյց էր տալիս մի մարդու ականջ։ Հէնց այդ ժամանակ և վերջում Սայամովը, իբր թէ, պարծենում էր, որ այդ ականջը Ֆէօդօրովինն է, որին սպանել է, այժմեան մեղադրվող Սարգսեանցի աջակցութեամբ»։

Այդ գործի առիթով կանչված վկաները դեռ հարց ու փորձի չեն ենթարկվել։

ՉԵՌՆՈԳՈՐԻԱՅԻ ԹԱԳԱՒՈՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
28 և 29 յունվարի

Պետերբուրգ.—Վերադարձաւ Մեծ Իշխան Անդրէյ Վլադիմիրովիչը։

Պետական Խորհուրդը պատգամաւորութիւն ընտրեց Միլիւտինի թաղմանը ներկայ գտնվելու համար։

Ժամը 2 ու 30 ր. կէսօրին Ցարսկոէ Սելօ, յետոյ ժամը 4-ին Պետերբուրգ ժամանեցին չեռնոգորական թագաւորը և գահաժառանգ Պետրը։ Ցարսկոէ-Սելօյում նրանց դիմաւորեցին Կայսրը և Մեծ Իշխան Կիրիլ Վլադիմիրովիչը։ Կայսրը համբուրվեց թագաւորի հետ։ Կայսրը հուսարական զգեստով էր և չեռնոգորական ժապաւէնով, չեռնոգորական թագաւորը՝ իր անուան 15-րդ գնդի զգեստով ու Ալէքսանդրեան ժապաւէնով. Կայարանից [illegible] քերով մեկնեցին Ալէքսանդրեան Պալատը։ Շքերթին ուղեկցում էր Նորին Մեծութեան պահակախումբը։ Ճանապարհին զօրքերը նուագում էին չեռնոգորական օրհներգը։ Պալատում սպասում էին Մեծ Իշխանները, արտաքին գործերի մինիստրը, Չեռնոգորիայի ռուս դեսպանը, Կայսրի շքախումբը։ Բարևելով Մեծ Իշխաններին, թագաւորը անցաւ պատուաւոր պահակախմբի առաջից։ Յետոյ թագաւորը և գահաժառանգը ընդունվեցին Մայր-Կայսրուհի Մարիա Ֆէօդօրովնայից։ Պետերբուրգում թագաւորին և գահաժառանգին դիմաւորեցին Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչը, պաշտօնական անձինք և քաղաքագլուխը, որ մատուցեց աղ ու հաց։ Թագաւորը կառքով Մեծ Իշխանի հետ և գահաժառանգը Մեծ Իշխան Կիրիլ Վլադիմիրովիչի հետ մեկնեցին Անիչկեան Պալատը, ուր ընդունվեցին կայսրուհի Մարիա Ֆէօդօրովնայից։ Այստեղից հիւրերը դիմեցին Ձմերային Պալատը, ուր պատուաւոր պահակախմբի գլուխ գտնվում էր Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչը։ Այստեղ թագաւորին սպասում էին մինիստրների խորհրդի նախագահը, զինւորական, ներքին և արտաքին գործերի մինիստրները, Կայսրի շքախմբի անձինք։

—

Պետերբուրգ.—Արքայազն Պետրին շնորհվեց Ալէքսանդր Նեվսկիի շքանշանները գոհարազարդ։

Այսօր Կայսրը ցերեկվայ ժամը 2-ին այցելեց Ձմերային Պալատում չեռնոգորական թագաւորին և բարեհաճեց մնալ մօտ կէս ժամ։ Յետոյ Նորին Մեծութիւնը այցելեց դուքս Իօհան Ալբրեխտ Մեկլենբուրգ-Շվերինսկիին։ Չեռնոգորական թագաւորն այցելեց բոլոր Մեծ Իշխաններին և Իշխանուհիներին։ Ժամը 4-ին թագաւորը Պետր գահաժառանգի հետ միասին շքախմբով այցելեց Պետրոս-Պօղոսի տաճարը և պսակ դրեց Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչի գերեզմանի վրա։

Ձմերային պալատում կայացաւ պաշտօնական ճաշ ի պատիւ չեռնոգորական թագաւորի։ Սեղանի կենտրոնում տեղ էր գրաւել Կայսրը, ունենալով ձախից Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդօրովնային, աջից՝ Նիկոլայ թագաւորին։ Թագաւորից առաջ նստել էր Կայսրուհի Մարիա Ֆէօդօրովնան։ Ներկայ էին չեռնոգորական արքայազնը, Մեկլէնբուրգի դուքսը և դքսուհին, պրինց Ալէքսանդր Բենըբերգսկին, Մեծ Իշխանները և Իշխանուհիները, մինիստրները, շքախմբի անձինք, գերմանական դեսպանը կնոջ հետ, չեռնոգորական թագաւորի շքախումբը, Ծէտինէի ռուսաց դեսպանը։

Ճաշի ժամանակ Կայսրը արտասանեց հետեւեալ ճառը.

«Ես ուրախ եմ ողջունելու ձեր Թագաւորական Մեծութեան Նրանից յետոյ, երբ Թագաւորի տիտղոսը ստանձնելուց յետոյ դուք պսակեցիք ձեր 50-ամեայ նշանաւոր ծառայութիւնը Չեռնոգորիային, լի պետական յաղթութիւններով ու զինւորական արիութեամբ։ Դեռահաս թագաւորութեան յետագայ խաղաղ զարգացումը եւ բարգաւաճումը ձեր Մեծութեան խելացի կառավարութեան ներքոյ միշտ կը հանդիպէ կենդանի արձագանքի, եղբայրական համակրանքի եւ, ուր հարկաւոր կը լինի, Իմ աջակցութեան եւ Ռուսաստանում: Խմում եմ Չեռնոգորիայի Նորին Մեծութիւն Թագաւորի՝ ռուսական զօրքի գեներալ-ֆելդմարշալի կենացը, Նորին Մեծութիւն Թագուհի Միլէնի կենացը, ամբողջ թագաւորական տան կենացը եւ պանծալի չեռնոգորական ժողովրդի կենացը»։

Պալատական երաժշտախումբը նուագեց չեռնոգորական օրհներգը։

Թագաւորը պատասխանեց սերբերէն հետեւեալ ճառով. «Ձերդ Մեծութիւն. Թէև ես արդէն վաղուց ի վեր բաղդաւորված եմ Ձերդ Կայսերական Մեծութեան դէպի ինձ ու դէպի իմ երկիրը ցոյց տուած անսպառ բարեհաճութեամբ, բայց և այնպէս Ձեր Մեծութեան ամենազօրաւոր ու ինձ համար չափազանց հաճելի խօսքերը և իմ թանգագին Չեռնոգորիային արած առանձին բարեմաղթութիւնները նոր ոյժով արձագանքեցին իմ սրտում. [illegible] անսահման շնորհակալիքը այդ խօսքերի համար։ Անցեալ տարի չեռնոգորական թագաւորութեան վերածնութեան նշանաւոր օրերին Ձեր Մեծութեանը հաճելի եղաւ պարգևաբաշխել ինձ Ձեր Արքայական առ ինձ տածած ողորմութեան պարգ, նշանով, նշանակելով ինձ մեծ ու փառաւոր ռուսական զօրքի ֆելդմարշալ։ Այդ պատիւը, որի մասին չէր համարձակվի երազել անգամ ամենաքաջ ու բաղդաւոր զինւորականը, Ձեր Մեծութիւնը ցոյց տուեց ինձ երբ և հնուց Ռուսաստանին հաւատարիմ ու անձնուէր քաջարի լեռնականների պարագլխի։ Ձերդ Մեծութիւն, Չեռնոգորիայում չը կայ այնպիսի մեծաքանակ զօրք, որպէսզի ես կարող լինէի խնդրելու Ձեզ ընդունել մի կոչում, որ համապատասխանէր այն կոչման, որպիսին Ձեր Կայսերական Մեծութիւնը հաճեց պարգևել ինձ.— ես հանդիսանում եմ սոսկ ներկայացուցիչ մի բուռն լեռնականների, որոնց Ձեր պանծալի նախորդները հրամայում էին 200 տարի շարունակ. Սակայն, հետևելով անցեալի պատգամին, ես միայն կարող եմ հաստատել այսօր, որ և Ձեր Մեծութիւնը հաւասարապէս իշխում է հաւատարիմ ու անձնուէր իմ բոլոր չեռնոգորցիներին, որոնք վառ սիրով սիրում են Ռուսական Ցարին և Ռուսաստանը, և որոնք իրանց եղբայրների հզօր օգնութեան մէջն են տեսնում իրանց ապագայի լաւագոյն գրաւականը։ Բարձրացնում եմ բաժակս խմելու Նորին Կայսերական Մեծութեան, Մայր Թագուհի Մարիա Ֆէօդօրովնայի, Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդօրովնայի, Նորին Կայսերական Մեծութիւն Գահաժառանգ-Արքայազն Մեծ Իշխան Ալէքսէյ Նիկոլայեվիչի, համայն Կայսերական Տան և պանծալի ռուս ժողովրդի կենացը»։ Երաժշտախումբը նուագեց ռուսական օրհներգը։

ԿՈՄՍ ՄԻԼԻՒՏԻՆԻ ԹԱՂՈՒՄԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
28 և 29 յունվարի

Եալտա.—Տեղական հաստատութիւնների ներկայացուցիչների և հոծ բազմութեան ներկայութեամբ կոմս և կոմսուհի Միլիւտինների մարմինները դուրս բերվեցին բնակարանից։ Կոմսուհու դագաղը տարվեց տաճար,

կամսի բաց դաշտը—Ալուպկայի եկեղեցին, ուր կատարվեց հոգեհանգիստ։ Գեներալ շտաբի պատգամաւորութիւնը դագաղի վրա դրեց արծաթեայ պսակ։

Պատգամաւորութիւնների և մեծ թւով հասարակութեան ներկայութեամբ դագաղը եկեղեցուց տարան դէպի ծովափ։ Գերեզմանատան մատուռի մօտ միացաւ կոմսուհու դագաղը։ Ծովափի նաւահանգստում գէն. Դումբաձէն ճառ արտասանեց, որից յետոյ նրա հրամանով զօրքերը չոքեցին։ Այդ դագաղները դրվեցին «Կազու» նաւի վրա Սեվաստոպոլ տանելու համար։

—

Օրեօլ.—Տաճարում նահանգապետի, գեներալների, քաղաքի ներկայացուցիչների և բազմաթիւ ազօթողների ներկայութեամբ կատարվեց հոգեհանգիստ կոմս Միլիւտինի յիշատակին, որ Օրեօլի պատւաւոր քաղաքացի էր։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

28 և 29 յունվարի

Պետերբուրգ.—Մեծ Իշխանուհի Մարիա Պավլովնայի թոքերի բորբոքումը զգալի չափով մեղմացաւ. տաքութիւնը առաւօտեան 36,4 էր։ Ընդհանուր դրութիւնը բաւարար էր։

Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչի հիւանդութիւնը առայժմ նպաստաւոր ընթացք. զարկերակը կանոնաւոր է, տաքութիւնը բնական է, երիկամունքների դրութիւնը միանգամայն բաւարար է. բայց և այնպէս լիակատար հանգստութիւն անհրաժեշտ է։

—

Ցարիցին.—Իլիոդորին հետևող ժողովրդի զգացած դրութեան մասին լուրերը չափազանցված են։ 100,000 ազգաբնակութիւնից բոլոր հետևորդների թիւը 5000 է, որոնք Գերմոգէն եպիսկոպոսի և Իլիոդոր աբեղայի վերաբերութեամբ ծագած դէպքերին վերաբերում են հանգիստ։ Միայն 200 կին, որոնց թւում քիչ չը կան ընկնաւորներ, փորձեցին խանգարել կարգ ու կանոնը եկեղեցում ու փողոցում։ Քաղաքում այժմ լիակատար հանգստութիւն է տիրում։ Իլիոդորականները այցելում են ուղղափառ տաճարները, և ոչ հայկական եկեղեցին։

—

Գլազգօ.—Ծովային մինիստր Չերչիլը արտասանեց նաւատորմին նուիրված մի փայլուն ճառ, որի մէջ [illegible]-Բրիտանիայի գոյութեան համար, մինչդեռ Գերմանիայի համար նաւատորմը իր տեսակի պերճութիւն է. Անգլիան կողջունէ նաւատորմ ստեղծելու մրցութեան թուլանալը, բայց եթէ ծովի վրա իշխելու կռիւը չը թուլանայ, այն ժամանակ նա կը շարունակէ զինվել աւելի ուժեղ, քան միւս պետութիւնները։

—

Փարիզ.—Սենատը Գերմանիայի հետ համաձայնութիւն կապելու քննութեան ժամանակ Րիբօն յայտնեց, որ Ֆրանսիան կորեկտ յարաբերութիւններ է պահպանում Գերմանիայի հետ, սակայն իրան զգում է և չի մոռանայ անցեալը. երկիրը բացասաբար կը վերաբերվի, եթէ մերժվի դաշնակցի և բարեկամի ընդունած համաձայնութիւնը։

Մամուլը մատնանշում է, որ անգլօ-գերմանական բանակցութիւնները չեն կարող անհանգստացնել Ֆրանսիային, որ ճանաչում է անգլիական կաբինէտի լօյալութիւնը. սակայն եթէ այդ բանակցութիւնները յանգեն ծովային սպառազինման կրճատման վրա, այդ արդէն վտանգաւոր է Ֆրանսիային, որովհետև Գերմանիան ֆինանսական հնարաւորութիւն կը ստանայ աւելացնել իր ցամաքային ուժերը։ Այդ պատճառով մամուլը մեծ համակրանքով է հանդիպում Անգլիայի այն խօստումներին, թէ Ֆրանսիային և Ռուսաստանին ևս մասնակից անելու է բանակցութիւններին։

Սենատում Պուանկարէն ֆրանս-գերմանական համաձայնութեան առիթով ասաց. «Պայմանագիրը թէև կատարեալ չէ, բայց և այնպէս լաւ է Ալժեզիրասի և 1909 թ. պայմանագրերից։ Եթէ համաձայնութիւնը մերժվի, այն ժամանակ Ֆրանսիան կը զրկվի Մարօկկօյի վրա հովանաւորութիւն հաստատելուց և ստիպված է լինելու դադարեցնել Աֆրիկայում 18-րդ դարից վարվող քաղաքականութիւնը։ Ֆրանսիան կարգաւորեց իր շահերը Միջերկրական ծովում Իտալիայի և Սպանիայի հետ. անհրաժեշտ էր պայմանաւորվել Գերմանիայի հետ։ Պայմանագիրը Ֆրանսիային ապահովում է կարևոր արտօնութիւններ»։ Մինիստրը ընդունում է զիջած հողերի արժէքը, բայց նկատում է, որ գերման գաղութային գործիչներն այնու ամենայնիւ բաւա-

բարված են։ «Ֆրանսիան կարող է, բայց պարտաւոր չէ այլևս հովանաւորել ֆրանս-գերմանական կորպորացիան։ Գերմանիան այլևս չի վիճի Ֆրանսիայի քաղաքական գործողութիւնների դէմ Մարօկկօյում, չէ խանգարելու ֆրանսիական ոստիկանական միջոցներին, խոչընդոտ լինելով զինուորական ձեռնարկութիւններին, ժխտել Ֆրանսիայի ազատութիւնը բարենորոգումների ծրագիր մշակելու»։

—

Փարիզ.—Սենատում Կլէմանսօն յայտնում է, որ 1909 թւի համաձայնութիւնը հրաշալի ամբողջութիւն էր, պարսաւում է Ահագիրի թնդանօթների սպառնալիքի տակ Գերմանիային արած զիջումները, կասկածում է պայմանագիրը խաղաղութեան հաստատուն զէնք դառնալու վերաբերմամբ. 1870 թւից Գերմանիան 5 անգամ սպառնաց պատերազմով և մերժեց հանգիստ ապրելու իրաւունքը, միայն եռապետեան համաձայնութիւնը համապատասխան է երեք պետութիւնների շահերին. Գերմանիան պահանջում է, որպէսզի Ֆրանսիան Անգլիայի կողմը չը բռնէ. «Ձը պատասխանենք նրա մարտակոչին»։ Կլէմանսօն մերժում է Գերմանիայի հետ մերձեցում կապելու միտքը։ «Մենք դեռ էլի մի բան անելու ենք աշխարհում»։

Օրէնագիծն ընդունվեց 212 ձայնով ընդդէմ 42-ի։ 38 հոգի ձեռնպահ մնացին, 7 հոգի էլ բացակայ էին։

Պատժիչ բատալիօնի զինուոր Էրնուի թաղման առիթով սօցիալիստական և անիշխանական կազմակերպութիւնները բողոքի մեծ ցոյց կազմեցին պատժիչ բատալիօններում տիրող կարգերի դէմ։ Էրնուի դագաղին հետևում էին բազմաթիւ պատգամաւորութիւններ կարմիր ու սև դրօշակներով։ Սինդիկալիստների գերեզմանատնից դուրս գալու ժամանակ ընդհարում եղաւ ոստիկանութեան հետ. երկու ոստիկանական գործակալ վիրաւորվեցին ծանր կերպով. վիրաւորվեց մի զինուոր։

—

Բեռլին.—«Գերմանիան» մեղադրում է լեհերին փոխ-նախագահի ընտրութեամբ սօցիալիստներին աջակցելու մէջ։ Միւս լրագիրները ընդգծում են ռէյխստագի պրեզիդիումի մինչև օրս չեղած կազմը։

Արտաքին գործերի մինիստրութեան քաղաքական բաժնի վերատեսչի մօտ կայացաւ նախաճաշ ի պատիւ անգլիական զինուորական մինիստր Խոլդէնի։ Վաղը մինիստրը մեկնում է Բեռլինից։

[illegible] Բեռլինում մնալը զուրկ չէ նաև քաղաքական նշանակութիւնից, սակայն կառավարականաբար հերքում է այն լուրերը, թէ իբր նրան տրված է յատուկ յանձնարարութիւն։

Այստեղ կարծում են, որ Գլազգոյում Չերչիլի արտասանած ճառից յետոյ աւելորդ է ենթադրել, թէ Անգլիայի և Գերմանիայի միջև կարող է համաձայնութիւն պատրաստվել զինաթափութեան հարցի առիթով։ Որոշ ժամանակից Գերմանիան նկատում է, որ Անգլիան աշխատում է աւելի սերտ յարաբերութիւններ առաջ բերել, որ ողջունվում է Գերմանիայից։ Խոլդէնը Բեռլին այցելելով կամեցաւ հող պատրաստել վաղորդ։

—

Թէհրան.—Կառավարութիւնը պատրաստվում էր փոխարինաբար 85,000 թուման վերցնել Շուստերից հրաժարված ամերիկացիներին վճարելու պայմանագրերը քանդելու համար, մինչդեռ երևաց, որ Շուստերը մեկնելուց առաջ ինքնակամ վճարել է իր հայրենակիցների ռոճիկները $3^1/_2$ տարվանը առաջուց և ճանապարհածախս 137,000 թուման, այնպէս որ ամերիկացիներին մնում է այժմ կառավարութեանը վերադարձնել 52,000 թուման։

—

Կահիրէ—Նացիօնալիստների կուսակցութեան հիմնադիր Մուստաֆա փաշայի մահվան տարեդարձի առիթով փողոցներում տեղի ունեցաւ բազմամարդ ցոյց։

—

Վաշինգտոն.—Զինուորական դեպարտամենտը պատուիրագրեց անյապաղ ձեռնարկել կառուցանելու մեծ բերդ Ֆլամէնկօ կղզու վրա Խաղաղ ովկիանոսում, Պանամայի ջրանցքի մուտքի մօտ, ուր լինելու են ի միջի այլոց 14 դիւյմանոց թնդանօթներ և ծանր տեսակի ցնդակացիրներ։ Ջրանցքի հակառակ ծայրին մօտիկ ապագայում նոյնպէս նախագծվում է կառուցանել նոյն տեսակի բերդ։

—

Բէլգրադ.—Վուրշումլիից հաղորդում են, որ արնաուտների մի հրոսակախումբ յունվ. 25-ին գիշերով յարձակվեց Շտավ գիւղի վրա։ Շինականները սկսեցին հրացանաձգութիւն։ Մի արնաուտ սպանվեց, միւսները փախան Թիւրքիա։ Հետևեալ օրը սերբիական սահմանապահ պահակախումբը Կոսս-

նէչի շրջանում հանդիպեց արնաուտների մի խմբի, որ հրացանաձգութիւնից յետոյ նահանջեց, թողնելով մի սպանված։

—

Լվով.—Սէյմի նիստում ռուսները օբստրուկցիա արին։ Սկսվեց իրարանցում և աղմուկ։

ԳՈՐԾԱԴՈՒԼ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

28 յունվարի

Մանչեստր.—Նաւահանգստի բանւորները չեն աշխատում։ Գործադուլ դեռ չէ յայտարարված։

—

Մօնս.—500 գործաթողներ փորձեցին քարուքանդ անել ապրանքային վագօնը. զինուորները համազարկ պարպեցին։ Երեք գործաթող վիրաւորվեցին. ամբոխը յարձակվեց զինուորների վրա, որի ժամանակ վիրաւորվեց մի կին։

—

Բրիւսէլ.—Բօրինաժի քարածխային հանքերի գործաթող բանւորները շարունակում են ոչնչացնել կենսական մթերքները և կողոպտել կրպակները։ Կառավարութիւնը նրանց դէմ զօրքեր ուղարկեց։

Գէնախի գաւառական խորհուրդը 50,000 ֆր. յատկացրեց գործաթողներին։

Սօցիալիստները հերթական հարցաքննում ներկայացրին պալատին 500 հազար ֆր. յատկացնելու։

—

Սենտ-Էտիէն.—Լուարի հանքային բանւորները 3532 ձայնով ընդդէմ 1323-ի որոշեցին փետրվարի 17-ին յայտարարել ընդհանուր գործադուլ։

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

28 և 29 յունվարի

Խարբին.—500 խունխուզ գրաւեցին Սինդզոու քաղաքը, կայարանից 100 վերստ հեռաւորութեան վրա, և սպառնում են երկաթուղային շրջանին։

—

Չիֆու.—500 նորակոչ զինուոր ուղարկվեցին Դէնչժօուֆու. բոլորն էլ լաւ զինված են։

—

Չիֆու.—Նահանգապետի նաւից իջեցրին 4 թնդանօթ, ռազմամթերք, 400 զինուորի։

Նահանգապետը պաշտօնապէս տեղեկացրեց [illegible]ներին, որ ինքը Չէնքի են կոչվում նորանոր զինուորացուներ։

—

Կուլջա.—Շիխոյի ճանապարհին յեղափոխականների մի զօրամաս կողոպտեց չինահպատակների։ Զօրամասի հրամանատարը յետ կանչվեց, յանցաւորները գլխատվեցին։

—

Ցիցիկար.—Դանիից հաղորդում են, որ Լանդկանվէյի գործակալները, հետապնդելով նահանգապետի ընտանիքին, որ գնում էր Շանխայ, յափշտակեցին կնոջը և աղջկան և պահանջեցին փրկանք։ Նահանգապետը տալիս է խոշոր գումար ու թանգագին իրեր։

—

Ուրգա.—Մոնղոլական կառավարութիւնը իր ֆինանսական դրութիւնը լաւացնելու համար կարգադրեց վաճառել բողդիխանի ուղտերը ու ձիերը, մաքս վերցնել օտարազգիների ապրանքներից, պետական հաշւով փոխադրել ռուսական պօստը Մոնղոլիայում, թոյլ տալ մասնաւոր մարդկանց օգտվել ճարպով արքունի ձիերից։

—

Մուկդէն.—Գեներալ-նահանգապետ Չժաօէրսիւնը ի պատասխանի Իւանշիկայի առաջարկութեան համաձայնեց հաշտվել Նանկինի կառավարութեան հետ պայմանով, որ կայսրը հրաժարվի և հանրապետութիւն հաստատվի։

Կալանաւորվեցին ավի հարցով զբաղվող բիւրօյի 50 զինուոր և մի օֆիցեր, որոնք աշխատում էին փախչել և միանալ յեղափոխականներին։

Չժաօէրսիւնը իր ընտանիքն ու գոյքը ուղարկեց Եապոնիա։

—

Տօկիօ.—Եապոն դրամատէրերը եռանդով իրանց դրամագլուխները տեղաւորում են Հարաւային Չինաստանում։

Արտաքին գործերի մինիստրը պարլամենտում յայտնեց, որ առ այժմ դրամ է պահանջվում Չինաստանի դէպքերի հետ կապված ծախսերի համար, բայց ապագայում զօրքեր ուղարկելու համար կը պահանջվեն մեծաքանակ ծախսեր։

ԹՈՒՐՔ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

28 և 29 յունվարի

Կ. Պոլիս.—«Թանինը» խիստ բողոքում է Եգիպտոսի և Տրիպոլիսի սահմանագլխին Նիազի-բէյին ձերբակալելու դէմ։

—

Հալէպ.—Ձեռնարկվեց Բաղդադի երկաթուղու բէլմները գնելու աշխատանքներին Հալէպից դէպի արևելք ընկած մասի վրա։

—

Հռոմ.—Գեներալ Կանէվայի խորհրդակցութիւնները կառավարութեան հետ վերջացած են համարվում։ Կանէվային աջողվեց հաւաստել, որ ցայսօր գործադրվող տակտիկան կանոնաւոր է եղել, որը և գործադրվելու է ապագայում։ Կանէվայի կարծիքով վտանգաւոր է երկար արշաւանքի ձեռնարկել դէպի երկրի ներսը։

—

Հռոմ.—Կանէվան և մինիստրները խորհրդակցեցին, որից յետոյ հաստատվեցին այն լուրերը, թէ Կիրէնաիկի զօրքերի հրամանատարի պաշտօնը վերացվում է, անկախ Տրիպոլիսի զօրահրամանատարի պաշտօնից։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Րաշտ, 26 յունվարի

Որպէս խօսվում է, պարսից կենտրոնական կառավարութիւնը, հաւանութեամբ Թէհրանի ռուսաց դեսպանի, այստեղի համար գաւառապետ-նահանգապետ է ուղարկում Ասիֆ-ուդ-Դովլէին, որի տրամադրութեան տակ դրված պարսից կօզակների մի խումբ, մօտ 150 հոգի, այսօր այստեղ հասաւ։

Թարգմանուդ գաւառամասի համար էլ գաւառապետ-գաւառապետ է նշանակվել յայտնի Սարդար-Ամջադի որդի Սալար-Ասադը, որը, որպէս խօսվում է, շատ շուտով գալու և գործի է անցնելու։

Էնզելիի դարաւորութեան համար էլ առայժմ հակասական խօսակցութիւն կայ։

Որպէս տեսնում ենք, շատ շուտով գոնէ այս շրջանը իր նորմալ դրութեան է հասնելու, շնորհիւ ռուսաց զօրքի ներկայութեան և միաժամանակ ռուսաց կառավարութեան պահանջի և ջանքերի։

Գարգառուդ գաւառամասում փայտի առևտրով պարապող մի հայ երիտասարդ, որպէս այնտեղից հեռագրում են, քանի օր է՝ կորել է։ Ենթադրվում է, որ տեղական անհանգիստ տարրերից սպանված և մարմինը թաղած, կորցրած լինեն։ Խօսվում է, որ յիշեալ երիտասարդը մօտը դրամ է ունեցել։ Տէրունի

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400-ԱՄԵԱԿԸ

Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում յունվարի 28-ին, երեկ. ժ. 8-ից քիչ անց, տեղի ունեցաւ մի խորհրդակցութիւն՝ հայ տպագրութեան 400-ամեակի յոբելեանը տօնելու համար։

Ժողովին մասնակցում էին 50-ից աւելի ներկայացուցիչներ հայկական զանազան հաստատութիւնների և պարբերական մամուլի ու տպարանների կողմից՝ Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկ. հրաւէրով։

Նախագահում էր բժշկ. Ա. Զարգարեան, քարտուղարներն էին՝ Գ. Վարդանեան և Գ. Լեոնեան։

Հրատարակչական Ընկ. վարչութեան կողմից Գիւտ ա.-ք. Աղանեան կարդում է մի համառօտ պատմական տեսութիւն հայ տպագրութեան մասին և եզրափակում է, որ 400-ամեակի համար հիմք է ծառայում «Պարզատումար» օրացոյցը, որ գրված է 1513 թւին։

Լէօն իր նստած տեղից շտապում է առարկել ասելով. «Սխալվում էք. ոչ թէ 1513, այլ 1512 թւին»։

Գիւտ քահանան հանգստացնում է Լէօին ասելով, թէ «այս բոլէխս կասեմ», և շարունակում է տեսութիւնը։

«Պարզատումարը» իր վրա թէև կրում է 1513 թիւը, բայց պէտք է կարծել, որ այդ օրացոյցն էլ, ինչպէս այժմս ընդունված է, տպված է եղել նախորդ տարին։

Լէօն դարձեալ պնդում է, որ 1512 թւի համար է, որովհետև կրում է հայոց 961 թիւը։

Ս. Մալխասեանցը հաստատում է Լէօի ասածը և ապա սկսում է խօսել իր կատարած ուսումնասիրութեան մասին։ Մանրամասն յիշեցնելով այն փաստերը, որոնք յիշված են «Մշակի» №№ 18-ում և 19-ում, եզրափակում է, որ իրան թւում է, թէ այն, ինչ որ այժմ ուզում են 400-ամեակի յոբելեանը տօնելու հիմք դարձնել, ոչ այլ ինչ է, բայց եթէ փորագրութիւն՝ կսիլօգրաֆիա։ Հէնց այն Գովրիկեանը, որի վրա հիմնվում է Լէօն, այդ «Պարզատումարը» նմանեցնում է «գրչագրի և ընդօրինակութեան»։ Եւ որովհետև տպագրութեան էրան սկսվում է շարժական տառերից, ինչպէս և Եւրոպան տօնեց Գուտտենբերգեան շարժական տառերի յոբելեանը, ուստի ինքնախաբէութիւն կը լինի 400-ամեակը այժմ տօնել։ Առաջարկում է մասնաժողով ընտրել քննելու խնդիրը և բաց այնմ գիտակցօրէն տօնելու։

Լէօն հակաճառում է Մալխասեանցին՝ հեգնական կերպով շեշտելով, որ ինքը «Պարզատումարը» տեսել է անձամբ. նա կսիլօգրաֆիա չէ։ Կսիլօգրաֆիաները, նրա ասելով, տպագրվում են միշտ մի երեսի վրա, այն ինչ «Պարզատումարը» տպագրված է երկու երեսի վրա։ Տպագրութեան զարգացման պատմութիւնը ցոյց է տալիս,—ասում է Լէօն,—որ սկզբում աշխատում էին տպագրերը նմանեցնել ձեռագրերին։ Ուստի ոչ մի առիթ չը կայ կասկած յարուցանելու։

Ա. Եզեկեան շեշտելով այն հանգամանքը, որ Աբգարի գիրքը (գրված 1565 թւին) օրհնութեան է արժանացել թէ հայոց կաթողիկոսի, թէ պապի և թէ Վենետիկի դուքսի կողմից, ընդունելի է համարում տպագրութեան աւելի ճիշդ էրան հէնց այդ գրքից. մանաւանդ որ Եւրոպան տօնել է ոչ թէ կսիլօգրաֆիան, այլ տպագրութիւնը,

Բժ. Ե. Մինասեան նկատում է, որ սկզբում տպագրել են շարժական տառերով, բայց փայտեայ. Գուտտենբերգն էլ այդպէս է սկսել։

Ս. Յարութիւնեան կարծում է, որ հարցը սխալ է դրված. կարևորը գաղափարն է. գրուածքը որևէ մեքենական միջոցով բազմապատկելու և ժողովրդին մատչելի դարձնելու։ Իսկ այդ տեսակէտից՝ թէ փորագրութիւնը և թէ տպագրութիւնը միևնոյն նպատակին են ծառայում։ Ուստի պէտք է տօնել այդ յոբելեանը առանց ուշադրութիւն դարձնելու՝ փորագրութիւն է թէ տպագրութիւն։ Եւ քանի որ ընդունված է 1912 թւին, ուրեմն պէտք է տօնել։

Ս. Մալխասեան խնդրում է թոյլ տալ իրան խօսելու ժամանակի մասին և առհասարակ պատասխանելու իր առաջարկութեան դէմ արված առարկութիւններին։

Եւ որովհետև նրան հնարաւորութիւն չէ տրվում, ուստի խնդրում է արձանագրութեան մէջ մտցնել, որ՝ 1) իրան թոյլ չը տուին խօսել և պարզել ճշմարտութիւնը՝ «Պարզատումարը» տպագրութիւն է թէ կսիլօգրաֆիա և 2) պարզելու թէ երբ է լրանում 400-ամեակը՝ 1912-ին թէ 1913-ին կամ յետոյ։

Այնուհետև սկսվում են առաջարկներ 400-ամեակը յաւերժացնելու մասին. հիմնել գրական ֆոնդ, պատկերազարդ ժողովրդական տպագրութեան պատմութիւնը, հանրամատչելի պատմութիւն տպագրութեան, կազմակերպել գրքերի ցուցահանդէս, դասագրքերի և մանկական գրքերի ցուցահանդէս, նորակազմ երաժշտաէջների ընկերութեան ցուցահանդէս և այլն և այլն։

Կաֆեան հարց է տալիս՝ համահայկական թէ համակովկասեան պիտի լինի այս տօնը։

Վճռվում է համազգային տօն դարձնել, բայց գործնական տեսակէտից կենտրոնանալ միայն Ռուսաստանում։

1. Բաստեան առաջարկում է յոբելեանի հետ կապել հայոց գիտական պատմութեան հրատարակելը։ Նա շեշտում է, թէ որովհետև փող է հաւաքվելու, ուստի վարձատրել լաւ, գիտական պատմութիւն գրողներին, որը մեզ պակասում է։

Ց. Շահնազարեան առաջարկում է Բարեգործական Ընկ. նման վարվել. գրական և հրատարակչական ֆոնդը միացնել։

Ս. Լիսիցեան առաջարկում է հիմնել մրցանակաբաշխութեան ֆոնդ։

Սառը ջուր են մաղում խօսողների վրա Համբարձում Մելիքեանի խօսքերը. ինչու փողը կապել այս յոբելեանի հետ, սա պէտք է լինի գաղափարական մի յոբելեան, այն ինչ՝ այդքան ֆոնդերի համար փող է հարկաւոր։ Փող, փող։ Իսկ ով կը տայ։ Մենք աջողութիւն չենք ունենայ։ Թողնենք ֆոնդերի հարցը յոբելեանից յետոյ։ Չը կապենք փողը։

Ց. Սօլովեան հարց է տալիս, թէ ով պիտի կառավարի այդ ֆոնդը։ Գտնում է, որ ֆոնդը չը պիտի կապել, այլ պէտք է մտածել, թէ ինչպէս նպաստենք տպագրած գրքերի տարածմանը։

Քուէարկութեամբ 38 ձայնով (57-ից) ֆոնդը վճռվում է կապել յոբելեանի հետ։

Գ. Վարդանեան մի ճառով ուշադրութիւն է հրաւիրում գրաշարների դրութեան վրա։ Իսկ գրաշարների ներկայացուցիչը շեշտում է, որ այդ տօնը ինչպէս գրաշարների տօնն է, և խնդրում է մի բան մտածել իրանց մասին։

Ակունեան և Սօլովեան գտնում են, որ այն էլ մեծ բան կը լինի, եթէ ժողովը իր վերաբերմունքով բարոյական աջակցութիւն ցոյց տայ։

Միրիմանեան համարում է գրաշարների հարցը ընդհանուր սօցիալական հարց, որը կապ ունի ընդհանուր բանւորութեան խնդրի հետ, և իրանք ոչինչ անել չեն կարող։

Լէօն նկատում է. «Երբ ասում են գրական, հրատարակչական և այլ ֆոնդ—ես այդ հասկանում եմ, բայց ինչ կարելի է անել գրաշարների համար, մեզ համար պարզ չէ»։

Գրաշարների ներկայացուցիչը առաջարկում է գրաշարական ֆոնդ, որին իրանք էլ կաջակցեն իրանց ամսական վճարներով։

Եր. Լալայեան աւելի արդարացի է համարում հիմնել գրաշարական ֆոնդ։

Եւ գրաշարների խնդիրը յանձնվում է ընտրվելիք մասնաժողովին։

Վալադեան հարց է տալիս, թէ երբ տօնել յոբելեանը. նախ այդ պիտի որոշել։

Մի քանի ձայներ նկատում են, որ այդ հարցը պէտք է թողնել մասնաժողովին որոշելու։

Շատ ուշ (11½-ին) ցրւում են ընտրութիւնները. մի կողմից լսվում են՝ Լէօ, կաճկաճեան, Վալադեան, Աբեղեան, միւս կողմից սկսում են ժողովականները ցրվել։

Էլ-Դա

ԲԱՑԱՏՐԵՑԷՔ

Այս յունվարի 28-ին Հրատ. Ընկ. հրաւիրած ժողովում պէտք է որոշվէր, թէ ո՞րն է հայկական տպագրութեան առաջին տարին։ Բայց չորոշվեց, չը պարզվեց և չէր էլ կարող պարզվել, քանի որ դա ակադեմիական լուրջ հարց է, մասնագէտների լուրջ և բազմակողմանի ուսումնասիրութեան կարօտ հարց։

Բայց մի՞թէ այդպէս կարող է լինել մեր ազգայինների համար։ Բաւական էր, որ «համբաւաւորներից» մէկը կտրականապէս յայտնէր, որ տպագրութեան առաջին տարին 1512-ն է։ Այդպէս էլ եղաւ, և հարցը համարվեց սպառված. հայկական տպագրութեան առաջին տարին 1512-ն էր...

Երբ այդ հարցի առիթով խօսում էր Գիւտ քհ. Աղանեանը՝ մենք նրան հաւատում էինք, երբ խօսում էր Ներսիսեան դպրոցի ուսուցիչներից մէկը, ինչպէս և Ստ. Մալխասեանցը, մենք նրանց էլ էինք հաւատում. բայց երբ խօսեց Լէօն և ջղայնօրէն ընդգծեց, թէ տպագրութեան առաջին տարին 1512-ն է, մենք նրան չը հաւատացինք։ Եւ լիակատար հիմք ունէինք, որովհետև նոյն օրը թերթել էինք նրա «Հայկական տպագրութիւն» գիրքը, որը հրատարակել է Հ. Առաքելեանը, որտեղ մի քանի տարի առաջ Լէօն գրել է հետևեալ տողերը։

Բաց անենք այդ գրքի առաջին երեսը, մենք կը գտնենք նրա նախաբանում հետևեալ տողերը, որոնք գրված են 1900 թ-ին.

«Տասն երեք տարուց յետոյ չորս հարիւր տարի կանցնէ այն օրից, երբ լոյս տեսաւ հայերէն առաջին տպագրած գիրքը»։

Թւաբանութիւն իմացողը եթէ այդ 13-ը գումարի 1900-ի հետ՝ կը լինի 1913 և ոչ թէ 1912, ինչպէս ջղայնօրէն մեղանչում էր իր դրածների դէմ անցեալ օր Լէօն։

Ապա, բաց ենք անում նոյն Լէօի նոյն «Հայկական տպագրութեան» 18-րդ երեսը, որտեղ Լէօն գրել է.

«Իտալիան 1513-ին հինգ գիրք տուեց հայերին, հաշւելով որ խորաքանչիւր գրքից տպագրված է 300-ական օրինակ... Իտալիան մի փոքրիկ պատուհան էր բաց անում դէպի Հայաստան»։

Այնուհետև խօսելով հինգ գրքերից մէկի մասին, այն է «Տաղարանի», որի մէջ կային նաև Յովհաննէս Թլկուրանցու տաղերը, Լէօն (նոյն Լէօն, չը շփոթէք) կըրկին շեշտում է.

«Թլկուրանցին վախճանվել է 1525-ին։ Եւ որովհետեւ նրա երգերը հրատարակվեցին 1513-ին, ուստի նա հանդիսանում է առաջին հայ հեղինակը, որի գրուածքները տպագրվում էին նրա կենդանութեան ժամանակ»։

Ապա բաց ենք անում նոյն գրքի 96-րդ երեսը, և դարձեալ նոյն թիւը չորրորդ անգամ ընդգծում է նոյն Լէօն։

«Քանի որ անյայտ էին 1513-ի հրատարակութիւնները, Աբգար Եւդոկացին էր համարվում հայկական տպագրութեան հայր... Այժմ այդ պատիւը խլված է Աբգարից...»։

Արդ, թոյլ տուէք մեզ մի հարց առաջարկել. Երբ էիք դուք, պ. Լէօ, ճիշդն ասում. հայկական տպագրութիւնը ուսումնասիրելիս թէ յունվարի 28-ին ճառախօսելիս, երբ դէպի ակադեմիական այդ հարցը, թւում է, այնքան սառնասիրտ վերաբերմունք պէտք է ցոյց տայիք, մինչդեռ դուք ջղայնացած, բորբոքված էիք խօսում։ Ի՞նչն էր պատճառը։ Արդեօք կրկին մի առիթ կար թերիմացութեան մէջ ընկնելու. թէ դա մի նոր մեղանչումն էր «պատմական վաւերագրերի» դէմ... Ինչու համար տպագրութեան պատմութիւնը գրելիս Լէօն առաջարկում էր տօնել 1913-ին, իսկ այժմ, «յայտնի» պատճառներով 400-ամեակի յոբելեանը տօնել է առաջարկում հէնց այս 1912 թւին, գուցէ հէնց մայիսին, կամ մինչև մայիս. անշուշտ «յայտնի» պատճառներով...

Ո՞րպիսի ներքին մղումներով էր ղեկավարվում Լէօն, երբ նա ջղայնացած խօսում էր Մալխասեանցի դէմ, բայց հակասում ինքն իրան, իր գրած «պատմութեան»։

Ախ, այդ անիծեալ «յայտնի» պատճառները, որոնք արաբական 1913 թւերը Լէօի աչքում 1912 են դարձրել և որոնք նրան պիտի չարչարեն, տանջեն, մինչև որ յոբելեանը չը կատարվի մայիսին կամ մինչեւ մայիս...

Ո՞րպիսի մղումներով էիք ղեկավարվում, պ. Լէօ, երբ ձեր «պատմութեան» մէջ չորս անգամ յիշած միեւնոյն փաստը աղաւաղում ու յեղաշրջում էիք։

Ե՞րբ էիք ճիշդ կամ սուտ խօսում. երբ ձեր «պատմութիւնն» էիք գրում թէ երբ այս յունվարի 28-ին ճառում էիք՝ հակասելով ինքներդ ձեզ։

Հօ չէք մեղանչել որեւէ ճշմարտութեան դէմ։

Բացատրեցէք... Խաթ.

ԼԱՒ ՄԱՐԴՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Այդ լաւ մարդը բժիշկ Վասիլիյ Միխայլովիչ Թումանեանն էր, որին Թիֆլիսի հասարակութիւնը թաղեց կիրակի, յունվարի 29-ին։

Նա ազնիւ մի մարդ էր, համակրող՝ հասարակական և գրական ամեն մի լաւ գործի և մանաւանդ գեղարուեստի զարգացմանը մեր քաղաքում։

Նա անաչառ և բարեսիրտ մի անձն էր, որ ատելով ատում էր ամեն մի չարամտութիւն և ստոր գործ։

Վասիլիյ Թումանեան իր կեանքի ընթացքում գրել է բազմատեսակ գրական նկատողութիւններ, փոքրիկ պատկերներ, երգիծաբանական կատակներ, որը զետեղել է նրանց ռուսերէն հրատարակութիւնների մէջ։

Մանաւանդ մեծ էր նրա գործունէութիւնը Արտիստական Ընկերութեան մէջ, որտեղ նա մեծ մասնակցութիւն ունէր սիրողների ներկայացումներ կազմելու գործում։

Նա համակրում էր ամեն մի նոր լուսաւոր երևոյթ հայերի կեանքում և ուրախանում էր տեսնելով նոր ույժեր թատրոնի և գեղարուեստի ասպարէզում։

Հանգուցեալի բոլոր բարեկամները և ծանօթները երբէք չեն մոռանայ ազնիւ Վասիլիյ Միխայլովիչի թանգագին յիշատակը։

Նունէ Դոլուխանեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Խուզարկութիւն Կուսապատում

Կուսապատ, 20 յունվարի

Ամսիս 14-ի գիշերը խուզարկութեան ենթարկեցին Մարգակերտ գիւղը, ուր գըտան 5 հրացան։

Լոյս 15-ի գիշերը խուզարկեցին Կուսապատ գիւղը, բայց ոչինչ չը գտնվեց։

Մութ և ստոր մարդիկ չեն դադարում ժողովրդին ահ ու սարսափի մէջ պահելուց՝ մատնելով և գիւղեր ու անհատներ խուզարկել տալով զուր տեղը։

Եղանակները մեզ մօտ գարնանային են։ Չը նայած որ այս տարի ձիւնը շատ սկսվեց (նոյեմբերի 5-ից), բայց շատ սակաւ ձիւն եկաւ մինչև օրս։

Գողութիւնը մեզանում քանի գնում՝ շատանում է. գողանում են ձի, կով։ Իսկ մանր գողութիւններին հաշիւ չը կայ։ Ո՞վ պէտք է գողութեան առաջը առնէ։ Հասարակութիւնը և գիւղական կառավարիչները շատ անտարբեր են վերաբերվում։

Լուսաստղ

Ջրի հարցը

Նոր-Բայազէտ, 25 յունվարի

Քարիմ-Քենդ հայ գիւղը այստեղից 3—4 վերստ հեռաւորութեան վրա է գտնվում միայն։ Գիւղը ամենաաղքատն է և ընկած Գեղարքունեաց լեռնաշղթայի ստորոտներում։ Գիւղի դիրքը լինելով աւելի բարձրադիր, թառած՝ սարերի արևելեան լանջի վրա, զուրկ է հողային բաւարար արգիւնաբերութիւններից, որոնք յաճախ կռւ են գնում բնական զանազան պատահարներից։

Քարիմ-Քենդի ժողովուրդը (70 տուն) զուրկ լինելով շատ տեսակի բարիքներից՝ զուրկ է նաև խմելու ջրից. նրա բնակիչները օգտվում են գլխաւորապէս ձիւների հալոցքներից, որոնք ձմեռ ժամանակ սառչում են, ուստի գիւղի ժողովուրդը ջուր է պատրաստում «ղաղլըներում» (ձիւնի աւազան), որոնք շինված են իրանց գոմերում, որտեղ փայտէ վանդակների վրա հաւաքելով ձիւնի կտորները՝ հալեցվում են և կաթկաթում քարէ կամ փայտէ տաշտերում։ Այդ «ղաղլըներից» թէ իրանք են գործածում ջուրը և թէ անասուններին խմացնում։

Այդպիսով ահա նրանց նեղութիւնը շատ մեծ է, մանաւանդ այսպիսի անձրևի ձմեռներում, երբ գիւղացիները ստիպված են նոյն իսկ ձիւնը հաւաքել հեռու տեղերից և մեծ դժուարութեամբ բերել-ածել թովլի՝ երդիկից «ղաղլըներում» հալեցնելու ջուր պատրաստելու համար։

Սակայն այդ դժուարութիւնների հանդէպ գիւղի ժողովուրդը անկարող է լինում մի աղբիւր կառուցանել գիւղում, թէև մի քանի վերստ (4—5 վ.) հեռու սարերի լանջերում գտնվում է մեծ քանակութեամբ մաքուր ջուր, որը շատ հեշտութեամբ կարող է վազել դէպի գիւղը և բաւականութիւն տալ խեղճ գիւղականների կարիքներին...

Չը նայելով, որ արդէն հարց է դրված, որ այդ ջուրը բերվի մինչև գիւղը, և չը նայելով, որ այնքան էլ մեծ ծախսեր չեն պահանջվելու, այլ մի 5—600 ր., բայց և այնպէս Քարիմ-Քենդի ժողովուրդը իր սուղ միջոցներով անկարող է այդ բանը գլուխ բերել առանց կողմնակի օժանդակութեան։

Ուստի այդ գիւղի ժողովուրդը մասամբ իր յոյսը դրել է մի որեւէ բարերարի նուիրաբերութեան վրա, որը իր հոգու փրկութեան համար կամ փառքի ու անուան տեսակէտից խղճալով գիւղի ժողովրդին՝ մի փոքր նուէր կարող էր անել գիւղում աղբիւր բերելու համար։ Դա իսկապէս մի մեծ բարեգործութիւն կը լինէր մեր բարերարների կողմից, որոնց ամեն մի կոպէկը մի «ողորմի» կը քամէր գիւղական ժողովրդի բերանից... երբ կը գար ջուր վերցնելու աղբիւրից։ Ջը որ գիւղացին աղբիւրի վրա ջուր խմելիս նախ և առաջ «աղբիւր կառուցանողին» է ողորմի տալիս...

Գ. Սինանեան

Վաղահաս գարուն

Շամախի, 27 յունվարի

Այս տարի ձմեռը խիստ չարաւ. այժմ երկիրը ծածկված է նորաբոյս կանաչով. ալաֆի մեծ կարիք չէ եղել անասունների դրսում արածելու պատճառով. հացի և գարու գինը իջնում է։ Ալիւրի պուդը 1 ր. 70 կոպէկից անց չէ եղել, գարու պուդը 90—95 կոպէկից, այժմ երկուսն էլ պակասել են հասնելով 1 ր. 60 կոպէկի ալիւրը, իսկ գարին 75—78 կ.։ Հայ չինովնիկ եկամուտի աղբիւր խաղողի այգիները թէև քիչ բերք տուին, բայց եղածը ծախվեց լաւ գնով, այն է՝ 25 պուդը 30—32 րուբլի։ Երկիրը առ այժմ ջրից կուշտ է. մարտի և մայիսեան անձրևները եթէ իրանց ժամանակին գան, այս տարի առհասարակ կենսական մթերքների առատութիւն կը լինի։ Հացի փութը արժէ 4 և 4½ կ., մսինը 10—11 կ., ոչխարինը 16 կ., ձուն 2 կ., իւղի փութը 38—40 կ., մի շիշ կաթը կովի 6 կ., գոմէշի 7—8 կ., ածուխի պուդը 45 կ. և այլն։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Յունվարի 28-ին Ալեքսանդրօ-Նեվսկի տաճարում կատարվեց հոգեհանգստեան կարգ կոմս Դ. Միլիւտինի յիշատակին։ Հոգեհանգստին ներկայ էին Կովկասի Փոխարքան, անմատօր Վատացին և այլ պաշտօնակատար անձինք։

◆ Կիրակի, յունվարի 29-ին, Թիֆլիսում տեղի ունեցաւ հանգուցեալ բժշկան Վասիլիյ Թումանեանի յուղարկաւորութիւնը։ Հանգուցեալը յարգանք էր վայելում Թիֆլիսի ինտելիգենցեայի շրջանում և նրա յուղարկաւորութեանը ներկայ էին գրական և գեղարուեստական գործողներ։ Դագաղի վրա դրված էին պսակներ Արտիստական և Կրեդիտային ընկերութիւնների, դրամատիկական խմբի և մասնաւոր անձերի կողմից։ Վ. Թումանեան յայտնի էր իբրև շիտակ, բարի և անաչառ մարդ։ Լինելով գրականութեան և թատրոնի սիրող, նա հետևում էր գրականութեան նորութիւններին, գրում էր մանր նկատողութիւններ և եռանդուն մասնակցութիւն ունէր թատերասէրների ներկայացումներին։

◆ Կիրակի, յունվարի 29-ին, կատարվեց Քամոյեան ս. Գէորգ եկեղեցու օծման արարողութիւնը խուռն բազմութեան ներկայութեամբ։

◆ Այսօր, յունվարի 31-ին, Մոսկվայում հողին է յանձնվում ուսանող Գասպար Հախումեանը, որ հանգուցեալ հրապարակախօս Սիմէօն Հախումեանի միակ որդին էր։ Երիտասարդ ուսանողը մահացած է եղել։ Հօրը Կովկասից տեղափոխվելուց շատ առաջ՝ Գասպարը, հազիւ տասը տարեկան, իր քրոջ և մօր հետ ապաստանում գտաւ «Աղբիւր-Տարազի» խմբագրատանը, աւարտեց Թիֆլիսում միջնակարգ ուսումը անցեալ գարնան և մտաւ բարձրագոյն դպրոց։ Ի՞նչը ստիպեց նրան այդքան վաղ վերջ տալ իր կեանքին, առայժմս յայտնի չէ։ Հոգեհանգիստ կատարվում է այսօր կէսօրին Ջղրաշէնի եկեղեցում պատարագից յետոյ։

◆ Քաղաքագլուխ Ա. Խատիսեանի բացակայութեան ժամանակ նրա պաշտօնը կը կատարէ փոխնախագահ իշխ. Ա. Արղութեան-Երկայնաբազուկը։

◆ Ռուս դրամատիկ խմբակի նախագահը զեկուցումն է ներկայացրել խմբակի գործունէութեան և գործերի դրութեան մասին Կովկասի Փոխարքային։

◆ Թիֆլիսի հասարակութեան ցանկութեամբ, փետրվարի 3-ին դասախօսուհի Ա. Պոժերանցեվա-Ֆրոլենկօ կը կրկնէ իր դասախօսութիւնը՝ «Գիւղական պատկերներ» խորագրով Թիֆլիսի կանանց Բարձրագոյն դասընթացքներում։ Դասախօսութեան սկիզբը ցերեկվայ ժամը 11½-ին է։ Նոյն դասախօսուհին փետրվարի 12-ին Երաժշտական Դպրոցի դահլիճում կը կարդայ երկրորդ դասախօսութիւն մանկավարժական հետևեալ թեմայով. «Մանկական խաղերի և զուարճութիւնների կրթական նշանակութիւնը»։ Դասախօսութեան սկիզբն է ցերեկվայ ժամը 12½-ին։ Տոմսակները՝ 1 ր. 50 կ. մինչև 25 կ. արժողութեամբ, վաճառվում են Ուսուցչուհիների Ընկերութեան մէջ (Բարեատինսկայա փողոց)։

◆ Ալավերդի եպիսկոպոս Դաւիթը դիմեց Վրաստանի սինօդական գրասենեակին խնդրելով ազատ համարել իրան սինօդական գրասենեակի անդամութեան պաշտօնից հիւանդութեան պատճառով։ Նրա խնդիրը յարգված է։ Նրա տեղ նշանակված է Գորու եպիսկոպոս Անտոնը։

◆ Թռչնապահութեան սիրողների կովկասեան ընկերութիւնը առաջին անգամ ցուցահանդէս է բանալու Թիֆլիսում մարտի 27-ից մինչև ապրիլի 1-ը Մուշտայիդ այգում։

◆ Յունվարի 27-ին խուզարկվեց նաև Յ. Սօլօվեանի բնակարանը։ Յ. Սօլօվեան ձերբակալված չէ։

◆ Թիֆլիսի պօստ-հեռագրական շրջանի գլխաւոր Գ. Մուսսելիուս մեկնեց Բաքու՝ տեղական պօստ-հեռագրական հաստատութիւնները քննելու համար։

◆ Թիֆլիսից «Рус. С.»-ին հեռագրում են. «Նահանգական դատարանի նախագահ Տօլպիգօն առաջարկեց Թարգման Բաստիանովին հրաժարական տալ։ Պատճառը՝ Բաստիանովի մասնակցութիւնն է քաղաքային դումայի ընտրութիւններին «Նոր խմբակի» կազմի մէջ, որ յայտնի չէ ինչու համարվում է «յեղափոխական»»։

◆ Թանձակեցի Միքայէլ Կարապետեանը յայտնեց ոստիկանութեանը, որ յունվարի 25-ին ժամանելով Թիֆլիս և անծանօթ լինելով քաղաքին հետ՝ դիմեց իրան հանդիպած մի անյայտ մարդու և խնդրեց իրան գիշերելու մի տեղ ցոյց տալ։ Անյայտը նրան առաջարկեց իր մօտ գիշերել, որին առաջարկը Կարապետեանը ընդունեց և անյայտի կողմից առաջնորդվեց նրա բնակարանը, որ գտնվում է Խուդադովեան փողոցում № 53 տանը։ Հետևեալ օրը դուրս գալով գնաց իր ծանօթներին պարելու, և երբ վերադարձաւ իր իրերը տանելու համար՝ տեսաւ, որ իրերը անհետացել են։ Ոստիկանութեան ձեռք առած միջոցներով ձերբակալվեցին յիշեալ բնակարանի ապրողներ Վ. Դաւիդովը, Ի. Իլինը և Պ. Նիլօվը, բոլորն էլ առանց որոշ զբաղմունքի։ Պարզվեց, որ վերջիններս Կարապետեանի 22 ր. արժողութեան իրերը վաճառել են Սօլդատսկի բազարում 3 րուբլով։

◆ 1911 թ. նոյեմբերի 14-ին Թիֆլիսում ձերբակալվեց մի մարդ, որը իրան անուանեց Վասիլի Դարչիաշվիլի և որը մեղադրվում էր Բաղալէթի գիւղից 4 եզ գողանալու մէջ։ Սակայն վերջում պարզվեց, որ յանցագործը Ադամ Բեդօշվիլին է և Թիֆլիսի նահանգական դատարանի կողմից դատապարտված է 10 տարվայ տաժանակիր աշխատանքի՝ Սաճալա գիւղում սպանութիւն կատարելու համար և փախել է Տօբօլեան տաժանակիրների բանտից։ Նա կրկին բանտարկվեց։

◆ Թիֆլիսի առևտրական ուսումնարանի 7-րդ դասարանն աւարտած Գէօրգի Ֆելանովը հագնելով ակցիզային պաշտօնէի համազգեստ՝ 8-րդ քաղաքամասի փողոցներից մէկի վրա գտնվող խանութների կշռեքարերն ու առևտուր անելու փաստաթղթերն էր քննում և փողեր հաւաքում։ Քննութիւնը պարզեց, որ նա ակցիզային պաշտօնեայ չէ և փողերը հաւաքելիս է եղել իր օգտին։

◆ Հայ Ուսուցչական Միութեան օգտին 1911 թ. դեկտ. 29-ին Թիֆլիսի ժողովարանում կայացած երեկոյթից ընդհանուր մուտք ստացվել է 788 ր. 01 կ., իսկ ծախք՝ 256 ր. 39 կոպէկ։

◆ Փետրվարի 1-ից Քութայիսում Բ. Ջուղաշվիլի խմբագրութեամբ կը սկսէ լոյս տեսնել վրացերէն մի նոր օրաթերթ «Ցխօվրեբա» (Կեանք) անունով։

◆ Յունվարի 29-ին տեղի ունեցաւ Նախալօվկայի նորակառոյց թատրոնի օրհնութեան հանդէսը մամուլի և հասարակական հաստատութիւնների ներկայացուցիչների ներկայութեամբ։

◆ Յունվարի 29-ի գիշերը Կուկիայի Ալէքսանդրօ-Նեվսկի տաճարի զանգակատան վրա ձերբակալվեց Տիմօֆէյ Կուզաչենկօն, որը ուզում էր ներս մտնել տաճարը գողութիւն կատարելու համար։ Յանցագործութեան վայրում գտնվեցին կոտրելու մի քանի գործիքներ։

◆ Ղազախի գաւառի Թովուզ գիւղի, Շամշադինի շրջանի Բերդ գիւղի հասարակութիւնները, ինչպէս և Ալափարս գիւղի ծխ. դպրոցի հոգաբարձութիւնը խնդրում են մեզ իրանց շնորհակալութիւնները յայտնել Ա. Ջաղէթեանին՝ վերոյիշեալ հասարակութիւններին և ուսումնարանին այս 1912 թ. ընթացքում մի-մի օրինակ «Մշակ» նուիրելուն համար։

◆ Նոյնպէս և Նորաշէն գիւղի ծխական դպրոցի հոգաբարձութիւնը խնդրում է մեզ իր շնորհակալութիւնը յայտնել Ս. Խարազեանին, որի՝ «Մշակի» 40-ամեակի առիթով նուիրած՝ մի օրինակ «Մշակը» ուղարկվում է յիշեալ ուսումնարանին, որը ինչպէս գրում է նոյն հոգաբարձութիւնը, իր հաստատութեան օրից այդ դպրոցը առաջին անգամն է, ինչ լրագիր է ստանում։

◆ Սուլդա գիւղի (Ալ. գաւ.) ծխական դպրոցի ուսուցիչը խնդրում է մեզ յայտնել իր շնորհակալութիւնը Մկ. Յովհաննիսեանին, որ մի օրինակ «Մշակ» է նուիրել յիշեալ չքաւոր ուսումնարանին։

◆ Վրիպակ.—«Մշակի» № 19-ի Բանասիրականում մտել են հետևեալ սխալները։ Այսպէս՝ 2-րդ երեսի 2-դ սիւնակի 11-րդ տողի (ներքևից հաշւած) վրա լոյս է տեսել՝ «երայնածիգ», պիտի լինի «երկայնածիգ». 3-րդ երեսի 2-դ սիւնակի 11-դ տողի վրա (վերևից հաշւած) տպվել է՝ «պատմագրութեան ծագագրեր պարունակող պրոշափոր», պիտի լինի՝ «...պրշավոր». Նոյն երեսի 3-րդ սիւնակի 5-դ տողի վրա (վերևից) տպված է՝ «33 տարի», պիտի լինի՝ «55 տարի». Նոյն երեսի նոյն սիւնակի 17-դ տողի (ներքևից) սկզբում տպված է՝ «... և ԺՆ», պիտի լինի՝ «և ԺԶ». Նոյն երեսի նոյն սիւնակի 13-դ տողի (ներքևից) վրա տպված է՝ «... միակ փորագրութիւնները», պիտի լինի՝ «... փորագրութիւնները»։

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԹԵՐԹԵՐԻՑ

◆ Ջիօկոնդայի հետքերով.—Ֆլորէնցիայի ոստիկանապետը հիմա Իտալիայում օրվայ հերոսն է։ Նկարիչները, արուեստի կրիտիկոսները, հասարակական գործողները ուղարկում են նրան շնորհաւորանքներ, հեռագրեր, շնորհաւորելով նրա առաջին աջողութիւնը։ Ջիօկօնդայի անհետանալուց յետոյ, երբ այն չը կարողացաւ գտնել Պարիզի ոստիկանութիւնը, ոչ ոք չէր հաւատում, թէ կարող էր գտնել Ֆլօրէնցիայի ոստիկանութիւնը։ Բայց Ֆլօրէնցիայի կվեստորը (գանձատան պաշտօնեան) ու նրա օգնականները վերադարձրին քաղաքին Անջելիկօ վարդապետի թանգագին ձեռակերտը։ Վատը այն էր, որ գողը կամ գողերը չը գտնվեցին։

Մի քանի օր ոստիկանական ծառայողները, հագած՝ որսորդի, գիւղացու և բանւորի շորեր, վխտում, վազվզում էին Ֆլօրէնցիայի բոլոր թաղերով ու շրջակայքով, նայելով ու ականջ դնելով ամեն կողմ։ Մի բան միայն աջողվեց հաստատ իմանալ. գողերը պատկերը տարել էին թանգարանից մի տուն՝ գիշերով, որտեղից և ուզում էին տեղափոխել մի ուրիշ տուն. իսկ վերջինից Մադոննան պէտք է դուրս տարվէր Ֆլօրէնցիայից։ Վերջապէս, գիշերվայ 1½ ժամին, երևաց մայթի վրա գողի ստուերը։ Մի փողոցից միւսը անցնելիս, նա լսեց քայլերի ձայն, կանգ առաւ, բայց յետոյ, հանգիստ շունչ առնելով, անցկացաւ, գնաց։ Այսպէս՝ նա կանգ էր առնում ամեն 2—3 րոպէին։ Ձեռքին ունէր մի մեծ կապոց։ Ոստիկանները վազեցին նրա ետևից. իսկ նա, տեսնելով որ իրան բռնելու են, գէն ձգեց կապոցն ու փախաւ։ Մի քանի րոպէից յետոյ նա թագնվեց քաղաքի նեղ փողոցիկներում, այնպէս որ էլ չը կարողացան գտնել։ Կապոցը բաց արին ու գտան մէջը Ասողի թանգագին Մադոննան։ Հետևեալ օրը, առաւօտից երկար շարքերով շտապում էին իշխանութեան զանազան ներկայացուցիչները ու քաղաքացիք՝ տեսնելու գտնված Մադոննան։ Թանգարանի տեսուչը մինչև անգամ լաց եղաւ յուզմունքից, տեսնելով Անջէլիկօյի կտաւը։ Ֆլօրէնցիացիք ու նրանց կվեստորը անասելի ուրախ են։

◆ Մոսկվայի համալսարանը.—Յունվարի 12-ին Մոսկվայի համալսարանը տօնեց իր գոյութեան 157-րդ տարեդարձը։ Ներկայումս համալսարանում կան 9242 ուսանող, ազատ ունկնդիր՝ 179 և դեղագործի օգնական բժշկական բաժնում՝ 245, որոնցով բոլոր ուսանողների թիւը 9666 է։ Անցեալ տարվայ համեմատութեամբ՝ ուսանողների թիւը պակաս է այս տարի և պակաս է 698-ով, իսկ ազատ ունկնդիրների թիւը՝ 35-ով։ 1911 թ. յունվարի 1-ից մինչև 1912 թ. յունվարի 1-ը, ուսումը չաւարտած, դուրս են գնացել 1794 և աւարտող՝ 1472։ Ոսկէ մեդալով աւարտել են 13 ուսանող ու արծաթէ մեդալով՝ 3։

Նոր թոշակաւորներ հիմնելու համար 1911-ին ստացվել են նուիրաբերութիւններ 93,891 րուբլի։ Առաջին կիսամեակում օժանդակութիւն են ստացել 392 ուսանող՝ 9,531 ր. 85 կ., իսկ երկրորդում՝ 269 ուսանող՝ 6,420 ր. 99 կոպէկ։ Ընդամենը՝ 15,952 ր. 84 կոպէկ։ Օժանդակութիւնը տրվել է 6-ից մինչև 50 րուբլի։

Դասախօսութիւններ լսելու տուրքից՝ առաջին կիսամեակում ազատ են եղել 1,624 ուսանող, երկրորդ կիսամեակում՝ 1,306 ուսանող։ Կիսով չափ վճարողների թիւը եղել է 146։

Համալսարանի գրադարանում 1911 թ. յունվարի 1-ին կար 201,810 անուն գիրք և պարբերական հրատարակութիւն՝ 357,298 հատոր ու 27,580 տետրերով։ Ուսանողական դահլիճի ընթերցարանում պարապել են 196 օրում 21,382 մարդ, անցեալ տարվանից 3000-ով պակաս։ Իսկ երեկոները՝ 5,267 մարդ, նոյնպէս պակաս անցեալ տարվանից 1000 մարդով։ Ընդամենը պահանջվել է 16,220 գիրք, անցեալ տարվանից 5000-ով պակաս։ Համալսարանը պահելու համար տրված է ընդամենը՝ 2.480,850 ր. 88 կ., անցեալ տարվանից 317,543 ր. 1 կոպէկ պակաս։

Տարվայ ընթացքում ուսանողներին տըրված է տրամվայի ձրի տոմսակ՝ 15,000 ր.։

◆ Մոսկվայի տրամվայները.—Տրամվայների բաժանմունքը գումարեց իր տարեկան արդիւնքը։ 1911 թւականին ստացվել է 10.700,351 ր. և միայն դեկտեմբերին ստացել է 1,088,687 ր.։ Ներկայ տարում յոյս կայ ստանալու 14—15 միլիօն րուբլի։

Ե. Ք. Ն.

ԳԻՏՈՒԹ.. ԳՐԱԿԱՆ.. ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Արքունական թատրոնում

I

Շաբաթ, յունվարի 28-ին օպերային խումբը դրել էր՝ առաջին անգամ ներկայ սէզոնին՝ «Նէրոն» օպերան։

Յիշեալ օպերան պատկանելով տաղանդաւոր Ա. Ռուբինշտէյնի գրչին՝ ունի եռաժշտական հարուստ և գրաւիչ կտորներ, որոնք թովում են ունկնդիր հասարակութեան։

Օպերայի մէջ դերերի թւում գլխաւոր առանցքը կազմում է Նէրոնի դերը, որը ստանձնել էր Լազարեւ։ Կարելի է ասել, որ Լազարեւ իրաւունք ունի իր բէնէֆիսում իր մէջ մտցնելու այդօրինակ մի պատաս

խանատու դեր։ Շնորհալի երգիչը կատարեց բաւական աջող՝ վաստակելով ծափահարութիւններ։

Կրեղայի (գըխատնէքուհու) դերում տ. Շուլգինա հրաշալի տպաւորութիւն թողեց։ Պէտք է ասել, որ ուժեղ դրամատիկական դերերում յաճախ աջողվում է Թիֆլիսի հասարակութեան այդ սիրելի երգչուհուն՝ թէ ձայնական և թէ խաղի կողմից։

Ալէշկօ (Պօպլէս), Զալէսկա (Եւլիխարես), Սօկօլսկի (Վինդէկս) և Սերգէեվ (Բալբի) իրանց գեղեցիկ կատարումներով նպաստեցին անսամբլի աջողութեան։

Այդ երեկոյ օպերային խմբի կառավարչի բենեֆիսն էր։

Թատրօնը լի էր հասարակութեամբ։

X.

II

Կիրակի, յունվարի 29-ին տեղի ունեցաւ հանդիսաւոր ներկայացում, որ նուիրված էր ռուսաց մեծ բանաստեղծ Ա. Ս. Պուշկինի մահվան 75-ամեակին։

Ներկայացումը սկսվելուց առաջ Թիֆլիսի II արական գիմնազիայի ուսուցիչ Վ. Կրօնովիչ կարդաց ռեֆէրատ «Պուշկինը ռուսական երաժշտութեան մէջ» թեմայով։

Ռէֆէրատից յետոյ օպէրային ամբողջ խումբը, տղամարդկանց և կանանց երգեցիկ խումբը և օրկէստրը սկսեցին երգել և նուագել բանաստեղծի կիսարձանի առաջ —որ դրված էր բեմի մէջ տեղը՝ զարդարված ծաղիկներով—Եսպօզիտօյի կանտատան, որը թողեց ունկնդիրների վրա գեղեցիկ տպաւորութիւն։

Այնուհետև ներկայացվեցին՝ «Ռուսալկի» օպէրայից I գործողութիւնը, «Ռուսլան և Լիւդմիլայից» 3-րդ գործողութիւնից մի տեսարան, «Բօրիս Գօդունովից» 6-րդ պատկերը, «Մազէպայից» 2-րդ գործ. առաջին պատկերը, «Եւգէնիյ Օնէգինից» 7-րդ պատկերը։ Մասնակցում էին օպերային խմբի համարեա թէ բոլոր անդամները։

Վերջում դրվեց հետևեալ կենդանի պատկերը՝ «Ռուսաստանը փառքի պսակով զարդարում է իր մայրենի երկրի մեծ բանաստեղծ Ա. Ս. Պուշկինի գլուխը»։

Ընդհանուր առմամբ ներկայացումը թողեց շատ հաճելի տպաւորութիւն։

Պէտք է նկատել, որ Թիֆլիսի հասարակութիւնը չէր բարեհաճել իր ներկայութեամբ լցնել թատրօնը այդ հանդիսաւոր երեկոյեան։ Ե. Ա.

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ

Բագու, 22 յունվարի

Եղբ. Նիկիտինների թատրօնում հայ խմբի դերասանները, բարեհաճ մասնակցութեամբ սիրողների, երէկ երկրորդ անգամ ներկայացրին «Անի քաղաքի կործանումը», ողբերգ. 5 պատկերով և 1 առարուածով։

Թատրօնի դահլիճը համարեա լիքն էր, կարգապահութիւնը օրինակելի։ Դերասան Սարաջեան և Գ. Ռշտունի բաւական աջող կատարեցին իրանց դերերը։ Վատ չէին միւսները։

Այդ խումբը միշտ իր ներկայացումները տալիս էր Բալախանու շրջանում՝ Մանթաշեանի, Փիթօյեանի թատրօնում և կրուժոկի դահլիճում։ Բայց այժմ սկսել է երբեմն և քաղաքում ներկայացումներ տալ, որը ուրախալի երևոյթ է։ Ս. Գարագաշ

—

Ղարասուբազար, 23 յունվարի

Ամսիս 22-ին տեղիս քաղ. ակումբում տեղի ունեցաւ ներկայացումն յօգուտ Բար. Ընկերութեան։

Հայոց ծխ. դպրոցի ուսուցչ. խումբը սիրողների մասնակցութեամբ խաղաց հայերէն լեզուով՝ «Մարվող ճրագներ» դրաման Ալէք. Աբէլեանի։

Չը նայելով որ սիրողների մեծ մասը առաջին անգամն էր բեմ բարձրանում, այնու ամենայնիւ խաղը անցաւ սահուն և լաւ տպաւորութիւն թողեց հանդիսականների վրա։

Վերջում հայ և ռուս սիրողները ներկայացրին «Թանգագին համբոյր» վօդեվիլը ռուսերէն լեզուով։

Ներկայացումից զուտ արդիւնք մնաց յօգուտ տեղիս Հայոց Բար. Ընկերութեան 131 ր. 33 կոպ.։ Ցար. Օրդուեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Վաղարշապատ, 23 յունվարի

Սրանով հրապարակօրէն յայտնում եմ վըճռապէս, որ «Մշակի» ներկայ տարվայ №№ 11-ի և 13-ի Ներքին լուրերի բաժնում հաղորդված լուրերի աղբիւրը կամ հաղորդողը ես չեմ։ Վահան ք. Աղաղաղեան

—

Բագու, 26 յունվարի

Թոյլ տուէք, խնդրեմ, «Մշակի» միջոցով հրաւիրել ձեռնհաս անձանց ուշադրութիւնը, որ նրանք բարի լինեն ուղարկելու ինձ այն գործածական երգերը,—ազգային, տեղական, ժողովրդական,—որոնք տեղ-տեղ երգվում են, բայց և որոնք տակաւին մինչև օրս տպագրված չեն։

Այդ երգերից ընդունվածները կը տպագրվեն «Սոխակ Հայաստանի» ազգային լիակատար երգարանի մէջ, որը ի դէպ առմ լոյս է տեսնելու շատ մօտիկ ապագայում տասներորդ տպագրութեամբ։

Գրիգոր ա. քահ. Գրիգորեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Թիւրքիան ընդունում է Ռուսաստանի նախաձեռնութիւնը այն խնդրում, որ մեծ պետութիւնները միջնորդ լինեն թիւրք-իտալական պատերազմը դադարեցնելու նպատակով։ Թիւրքիայի միակ պահանջն է պահել սուլթանի գերիշխանութիւնը Տրիպօլիսում։

✦ Թիւրքական ներքին գործերի մինիստրութիւնը արգելեց Կ. Պօլսի լրագիրներին տպագրել որևէ թղթակցութիւն արտասահմանից, թիւրք հեղինակներից ուղարկված։

✦ Անգլօ-գերմանական մերձեցման խնդիրը հասունանում է։

✦ Պարիզում «Pro Armenia»-ի խմբագիր Պիէր Քիարի թաղմանը ներկայ են եղել պատգամաւորութիւններ հայերի և ֆինլանդացիների կողմից։

✦ Պէկինում ամենօրեայ խռովարկութիւնները երևան են հանում ռումբերի պահեստներ։

✦ Պարսկական վերջին դէպքերի ժամանակ, համաձայն ռուսաց պաշտօնական տեղեկութիւնների, սպանվել ու վիրաւորվել են ընդամենը 86 զինուոր։

✦ Իտալիան նոր զօրաբանակ է ուղարկում Տրիպօլիս՝ պատերազմի դաշտը։

✦ Իւանշիկայի դէմ պրինցների կազմակերպութեամբ նոր մահափորձ կատարվեց, բայց տէրրօրիստները կալանաւորվեցին և գլխատվեցին։

✦ «Daily Telegraph»-ի Պէկինի թղթակիցը հաւաստիացնում է, որ Ռուսաստանը Չինաստանին տեղեկացրել է, թէ եթէ այժմ համաձայն է հրաժարվել Մօնգօլիայի նկատմամբ իր նախկին պահանջներից, եթէ Չինաստանը զիջէ իրան Ուրգան և Մօնգօլիայի հիւսիս-արևելեան մասը, որ հարուստ է հանքային հարստութիւններով ու անտառներով։ Լրագիրը աւելացնում է, որ այդ բանակցութիւններն աւելի կարևոր միջազգային նշանակութիւն ունեն, քան ռուսական քաղաքականութիւնը Պարսկաստանում։

✦ Դիպլօմատիական մարմինը տեղեկացրեց, որ ինքը դէմ է չինական մայրաքաղաքը Պէկինից փոխադրելուն։

✦ Խանկօույում 400,000 տաէլ հանգանակվեց յօգուտ յեղափոխականների։

✦ Պետերբուրգի դիպլօմատիական շրջաններում վճռված է ընդունել չինական հանրապետութիւնը հէնց որ նոր կառավարութեան պարագլխից տեղեկութիւն կը ստացվի դինաստիայի հրաժարականի և հանրապետական կազմ հաստատելու մասին։

✦ Մուկդէնի փոխարքայ Չժաօէրսիւնը հեռացվեց պաշտօնից։

✦ Շանխայ դիմող երկաթուղին, որի մէջ նստած էին կայսերական իշխանները, ենթարկվեց յեղափոխականների յարձակման, որոնց նետած ռումբերից իշխաններից շատերը վիրաւորվեցին։

✦ Հիւսիս-Ամերիկական Միացեալ Պետութիւնները մտադիր են գրաւել Մէկսիկան։

✦ Մահմէդ-Ալին, դուրս գալով Ղազվինից, գտնվում է Մազանդարանի ճանապարհին։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

28 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Կիէվի դատաստանական պալատը հաստատել է այն մեղադրական ակտը, որով պատանի Անդրէյ Իւշչինսկիին սպանող Բէյլիսը դատվելու է 1453-րդ յօդուածի երկրորդ մասով և 13-րդ յօդուածով։

ՄՕՍԿՎԱ։ «Утро Россіи»-ի խմբագիրը պատասխանատուութեան է ենթարկվում 1404-րդ յօդուածով։

ԳՕՏԱ։ Բացվեց օդագնացութեան մշտական դպրոց։

ՋԱԳՐԵԲ։ 10 օպպօզիցիօն լրագիրներ դիմեցին Վիէննայի, Պրագայի և Բուդապեշտի մամուլին՝ կոչ անելով համակրանք յայտնել լրագիրների գրաւման առիթով։

ՎԻԷՆՆԱ։ 5-րդ զրահանաւ «Տիգետհօֆը» ծով կիջեցվի փետրվարի 8-ին։

29 յունվարի

ԼԻԲԱՎԱ։ Այրվեց Վիկանդէրի և Լարսօնի գործարանը. վնասը 1½ միլիօն է։

ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿ։ Նորվէգիայի հիւպատոսու ռուսահպատակ Էրիկսօնը հաշտարար դատաւորից դատապարտվեց 6 ամսով բանտարկութեան խաբեբայութեամբ օտարազգի նաւերի վրա ռուսական դրօշակ պարզելու համար։ Էրիկսօնը ենթարկվելու է նոյնպէս խոշոր մաքսային տուգանքի։

ԿՕԼԳՐԻՎ։ Ստացված տեղեկութիւնների համաձայն՝ վերջին ձիւնախառն փոթորկի ժամանակ սառել են 15-ից աւելի մարդ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՕՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ձմեռային երթևեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ արագ № 2 գնացքը՝ (I, II և III կարգի վագօն.) 10 ժ. 20 ր. առաւ., Աղստաֆա է հասնում 12 ժ. 44 ր. կէսօր., Գանձակ՝ 3 ժ. 18 ր. ցեր., Եւլախ՝ 4 ժ. 52 ր. ցեր., Հաջի-Կաբուլ՝ 8 ժ. 35 ր. երեկ., Բագու՝ 11 ժ. 43 ր. գիշ.։ Մարդատար № 6 գնացքը՝ (միայն I և II կարգի վագօն.) 3 ժ. 33 ր. ցեր., Աղստաֆա է հասնում 6 ժ. 29 ր. երեկ., Գանձակ՝ 9 ժ. 46 ր. երեկ., Եւլախ՝ 11 ժ. 53 ր. գիշ.՝ Հաջի-Կաբուլ՝ 4 ժ. 20 ր. գիշ., Բագու՝ 8 ժ. 11 ր. առաւ.։ Պօստատար № 4 գնացքը՝ (բոլոր կարգերի վագօններով) 11 ժ. 18 ր. գիշ., Աղստաֆա է հասնում՝ 2 ժ. 12 ր. ցեր., Գանձակ՝ 5 ժ. 29 ր. առաւ., Եւլախ, 7 ժ. 30 ր. առաւ., Հաջի-Կաբուլ՝ 12 ժ. 01 րոպէին կէսօրվայ, Բագու՝ 4 ժամ 52 րոպէին ցերեկվայ։ Խառն № 106 գնացքը՝ (IV կամ III կարգի վագօններով, երբ կարևորութիւն պատահի) 6 ժ. 32 ր. առաւ., Աղստաֆա է հասնում 10 ժ. 42 ր. առաւ., Գանձակ՝ 2 ժ. 57 ր. ցեր., Եւլախ՝ 6 ժ. 25 ր. երեկ., Հաջի-Կաբուլ՝ 1 ժ. 16 գիշ., Բագու՝ 7 ժ. 12 ր. առաւ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ Մարդատար № 74/75 գնացքը՝ (բոլոր կարգի վագօններով) 11 ժ. 48 ր. գիշ., Ղարաքիլիսա է հասնում 7 ժ. 01 ր. առաւ., Ալէքսանդրօպօլ՝ 10 ժ. 31 ր. առաւ., Էջմիածին կայար.՝ 3 ժ. 45 ր. ցեր., Ուլուխանլու՝ 4 ժ. 12 ր. ցեր.։ (Առանց Երևան մտնելու։ Սակայն Ուլուխանլուից առանձին գնացքը Երևան ուղևորվում է 4 ժ. 37 ր. ցեր., և Երևան հասնում 5 ժ. 20 ր. երեկոյեան)։ Նախիջևան՝ 9 ժ. 26 ր. երեկ., Ջուլֆա՝ 11 ժ. 10 ր. երեկ.։ Մարդատար-ապրանքատար № 78/79 գնացքը. 5 ժ. 34 ր. երեկ., Ղարաքիլիսա է հասնում՝ 12 ժ. 48 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ՝ 4 ժ. 32 ր. գիշ., Էջմիածին կայարան՝ 4 ժ. 41 առաւ., Երևան՝ 11 ժ. 06 ր. առաւ., և այլևս գէնը չէ գնում։

ԲԱԹՈՒՄ՝ Մարդատար № 5 գնացքը՝ (բոլոր կարգի վագօններով) 5 ժ. 45 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 9 ժ. 51 ր. եր., Բաթում՝ 6 ժ. 26 ր. առաւ., Պօստատար № 3 գնացքը՝ (բոլոր կարգի վագօններով 9 ժ. 50 ր. առաւ., Միխայլօվօ է հասնում 1 ժ. 56 ր. կէսօր., Բաթում՝ 11 ժ. 13 ր. գիշ.։ Մարդատար № 7 գնացքը՝ (II և III կարգի վագօններով) 10 ժ. 38 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 3 ժ. 08 ր. գիշ., Բաթում՝ 1 ժ. 42 ր. կէսօրին։

ԲՕՐԺՕՄ՝ մարդատար № 9/66 գնացքը՝ (բոլոր կարգի վագօն.) 3 ժ. 23 ր. ցեր., Գօրի է հասնում 6 ժ. 02 ր. երեկ., Բօրժօմ՝ 9 ժ. 02 ր. գիշ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ Մարդատար № 5 գնացքը՝ 5 ժ. 07 ր. երեկ.։ Պօստատար № 3 գնացքը՝ 8 ժ. 54 ր. առ.։ Արագ № 1 գնացքը՝ 9 ժ. 56 ր. գիշ., որը այլևս դէնը չէ գնում։ Խառն № 107 գնացքը՝ 9 ժ. եր.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ պօստատար № 72/73 գնացքը՝ 8 ժ. 25 ր. առաւ.։ Մարդատար-ապրանքատար՝ № 80/81 գնացքը՝ 1 ժ. 40 ր. ցերեկվայ։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ Մարդատար № 6 գնացքը՝ 2 ժ. 50 ր. ցերեկ., Պօստատար № 4 գնացքը՝ 10 ժ. 28 ր. գիշ.։ Մարդատար № 8 գնացքը 5 ժ. 33 ր. առաւ. (այս գնացքը Բագու չէ գնում)։

ԲՕՐԺՕՄԻՑ՝ Մարդատար № 6/10 գնացքը՝ 7 ժ. 58 ր. առաւօտեան։

Տանօրութիւն.—Ձմեռային երթևեկութեան միջոցին որոշված է Թիֆլիսից Պետերբուրգ (յետ և առաջ) անմիջական, առանց վագօն փոխելու հաղորդակցութիւն՝ Բագուի-Ռօստովի-Խարկօվի վրայով Անդրկովկասեան գծի արագ №№ 1 և 2 գնացքներով։ Գնացքում լինելու է մէկ միքստ վագօն I և II կարգի և մէկ վագօն III կարգի. բոլոր տեղերը պլացկարտերով են։

Նոյնպէս հաստատվում է Թիֆլիս-Մօսկվա յետ և առաջ, առանց վագօն փոխելու, հաղորդակցութիւն՝ Բագուի-Ռօստովի և Կօզլովի վրայով՝ արագ № 1 և 2 գնացքներով։ Գնացքում լինելու է Միջազգային ընկ մէկ միքստ վագօն I և II կարգի, որի համար վերցվելու է յաւելեալ արժէք. ամեն մէկ հազար վերստին 8 ր. I կարգում և 6 ր. II կարգում։ Թիֆլիսից-Մօսկվա հաշվում է 2877 վերստ։

Առանց վագօն փոխելու հաղորդակցութիւնը Թիֆլիս-Բագու-Ռօստով յետ և առաջ կատարվելու է արագ № 1 և 2 գնացքներով։ Բոլոր կարգերի տեղերը պլացկարտով են։

Высочайше Утвержденное Русское Обществ. Пароходства и Торговли, учрежд. въ 1856 г.

ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.

Ձմեռային երթևեկութիւն

ՂՐԻՄ-ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻԾ

Մեկնում են Բաթումից

I Պօստային-մարդատար շոգենաւերը.
Երեքշաբթի ժամի 1-ին գիշերը, շրջանակի գծով.
Հինգշաբթի » 1 » » »
Շաբաթ » 12 » ուղղակի »
II Մարդատար շոգենաւեր.
Երկուշաբթի ժամի 2-ին ցերեկը, շրջանակի գծով
Շաբաթ » 2 » » »
III Մարդատար-ապրանքակիր շոգենաւերը.
Երեքշաբթի կէս գիշերին, շրջանակի գծով.
Ուրբաթ » » » »

Ժամերը Պետերբուրգի են։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՓՕՍՏԱՅԻՆ ԳԻԾ

Կանօնաւոր հաղորդակցութիւն դէպի Ալէքսանդրիայի, Բօլգարիայի, Մակեդօնիայի, Սերբիայի, Անատօլիայի-Պարսից-Ծոցի (Персидскій заливъ) գծերի բոլոր նաւահանգիստները։

ԲԱԼՏԻԱԿԱՆ ԳԻԾ

Կանօնաւոր հաղորդակցութիւն ուղղակի Պետերբուրգ-Ռիգա, Լիբավա և Բէվել։

Տոմսակները կարելի է գնել Թիֆլիսի գրասենեակում, Վելեամինօվսկայա փողոց, № 18.

Հեռախօս № 11.

Ընդունվում են եւ ապահովագրվում են ապրանքներ ճենոտու պայմաններով։

Գործակալ՝ Ս. Խ. Սուլխանեանց

(Հ.) 0—35

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Ամէն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

«606»-Ի ՆԵՐՍՐՍԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9—10 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Ց. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական, վիրաբուժութեան և միզասեռ. հ.։
Գ. Ց. ՖՈՒՐԳԻՆՕՎ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Գ. ԿԱՐԱԳԻՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահաս.։
Ի. Ա. ՖՐԱՆԿ—9—2 ժ. ատամների բուժումն, լցնելը (պլոմբա) և արհեստական ատ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ի. Ա. ՖՐԱՆԿ—5—7 ժ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ Բ. Նաւասարդեան

1. 0—9



(M. 28759/28782)

№ 4711 Ճարպային շպարը

կաշուն ընքշացնում է, թաւշանման դարձնում եւ գեղեցկացնում։

Ֆերդ. Միւլգենս Պարֆիւմէրիա №4711

Ուրկիկը 30 կոպ.

Մատակ. Նոբէն Մեծ. Ռուսաց Բ. Դրան։

3—1

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԵՈՐԳԲԷԳԵԱՆ

Աչքի հիւանդութիւններ

Առաւօտեան ժամը 10—1.
Երեկոյեան ժամը 5—7.
Վելեամինօվսկայա փողոց, № 8.

(Կ. Չ.) 416. 100—75

ԲԺԻՇԿ

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ

Ընդունելութիւնը) 10—11 ժ. առ. (երեխաների)
ամեն օր) 5—7 ժ. երեկ. (ընդհանուր)

Միքայէլեան փող., № 36. տէլէֆօն 388.

(Չ.ու.Կ.) 761. 100—72

ԲԺԻՇԿ

Յ. ՄԵԼԻՔ-ՆՈՒԲԱՐԵԱՆ

(ՏԷՐ-ՄՕՎՍԻՍԵԱՆ)

Ներքին և երեխայոց հիւանդութիւններ

(Մասնագիտ. ԹՈՔԵՐԻ հիւանդութիւններ)

Ընդունե- (առաւօտեան ժ. 12—1-ը։
լութիւնը (երեկոյեան ժ. 4—6-ը։

Բէբութօվսկայա, № 66.

(Շ.Ե.) 130. 100—67

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Մասնագէտ սիֆիլիս (606), միզասեռական վեներական և կաշուի հիւանդութիւնների։ Էլեկտրաբուժութիւն.

Ընդունե- (12½—2 ժ. ցերեկվայ։
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.
ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ առ. ժ. 9—10-ը։

Սօլօլակ, Բէբութօվսկայա, № 33 (տնկին Դօսկէվիչի փողոցի)։ Տէլէֆօն № 1175.

(Ե. Հ.Կ.) 888. 100—60

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արդէն վաճառվում է Ն. ՔԱՋԲԵՐՈՒՆՈՒ

Էջմիածնական խառիզան եւ Արա հեղինակները

(Վերջին կաթող. ընտրութեան գաղտնիքը)

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊԷԿ

Կարելի է ձեռք բերել Թիֆլիսի բոլոր գրախանութներում։ Գումարով գնողները թող դիմեն՝ Эривань, Астафьевская ул. № 108, Амазаспу Авакяну.

(Օ.Մ.) 62. 3—1

ՓԵՏՐՎԱՐԻ 1-ԻՑ ՎԵՐՍԿՍՈՒՄ Է

„ՄԱՄՈՒԼ“

Շաբաթաթերթը

Նոյն խմբագրական կազմով։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Տարեկան բաժնեգինը

Ռուսաստանում 3 ր., արտասահմանում 4 ր.։
Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Мамулъ“.
Tiflis (Russie), Rédaction „Mamoul“.

(Ու.Կ.Ե.) 50. 5—4

Լոյս տեսաւ եւ վաճառվում է հռչակաւոր Ֆրանսիացի գրող

ՎԻԿՏՕՐ ՀԻՒԳՕՅԻ

ԻՆՆՍՈՒՆ-ԵՐԵՔ

նշանաւոր վէպի հայերէն թարգմանութիւնը

„ԱՐՕՐ“ ամսագրի հրատարակութեամբ

—o—

Այս կլասիկական չքնաղ վէպը, որի նիւթը վերցված է ֆրանսիական մեծ յեղափոխութիւնից, պէտք է կազմէ ամեն մի մատենադարանի զարդը և լինի ընթերցանութեան ամենացանկալի նիւթ։

ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.

Ի նկատի ունենալով, որ տպված է միայն 400 օրինակ, ուստի ցանկացողները պէտք է շտապեն վաղօրօք ստանալ, ուղարկելով իրանց պահանջը և դրամը «Մշակի» խմբագրութեան։

Գիրքը բաղկացած է 432 մեծադիր էջերից։

0—13

ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ ՉԱՂ ՄԱՐԴԻԿԸ

ՈՐՊԷՍԶԻ ՆԻՀԱՐԵՆ,

գործ են ածում միակ փորձված «Դ-ր Մարկօնի դեղափոշին»։ Չը պէտք է փորձեր անել զանազան անյայտ և ռէկլամի առարկայ դեղերի հետ, որոնք վնասում են առողջութեանը և չեն հետազօտված գիտութեան կողմից։

Դ-ր Մարկօնի դեղափոշին միշտ օգնում է և երբէք վնաս չէ առաջացնում։ Նա գովաբանված է գիտութեան ներկայացուցիչների կողմից։

Ծախվում է Ռուսաստանի բոլոր դեղատներում և դեղատնային խանութներում։

Իսկականը միայն «Փակէր Ընկ. Բեռլինում» փաթթ. մարկայով, որ գտնվում է իւրաքանչիւր արկղիկի վրա։

Արկղիկը՝ մի ամիս բաւականացող՝ գինը 3 ր., երեակ մեծութեամբ 7 ռուբ.։

Գլխաւոր պահեստը ամբողջ Ռուսաստանի համար. МОСКВА. Е. БЕВЕРЪ. Покровка, д. Арбатскихъ.

(Ե.) (M. 488975) 10—6

Главный складъ у Торговаго Дома Гебертъ фонъ ШВАРЦТАЛЬ и Кº, Одесса.

(M. 466890) 8—2

!!! ԿՕՍՏԻՒՄ ՁՐԻ !!!

Չը նայած ծայրայեղ էժանութեան՝ «Մարօկկօ» չէվիօտ կտորը բամբակից չէ, այլ թէ բրդից, և միանգամայն փոխարինում է անգլիական ամենալաւ կտորներին. բոլորովին գեղեցիկ է, ամուր և գործնական։ Գոյները՝ սև, մուգ-կապոյտ, շագանակագոյն և ձիթագոյն։ Կտորը, որ 4¼ արշ. է, ողջ. կօստիւմի համար, արժէ 2 ր. 5 և աւելի կտոր պատուիրելուց՝ 1 կտորը ուղարկվում է ձրի, իբրև նուէր։ Ուղարկ. ենք վերադիր վճ., պօստով, առանց կանխավճ.։ Պահանջները հասցէագրել. Фабрика З. Г. Розенталя, г. Лодзь, № 21.

(31,5,10) (Л. 6) 4—2

ԴԱՇՆԱՄՈՒՐ

«Ռէնից» տրվում է վարձով մինչև սեպտեմբեր ամիսը։ Այդտեղ ծախվում են նաև ուղտի բուրդ, զանազան վարձնիէներ և բարբարիսի սիրօպ։

Նոյնպէս վերցվում են պատուէրներ վերմակներ պատրաստելու։ Հասցէն՝ Измайловская ул., д. № 15, քաշել զանգակի պանը։

59. 1—1

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Գ. և Մ.

ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՆԵՐԻ

Նիկօլայէվսկայա, № 36.

(Ա.Օ) 1212. 25—21

Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպ. Հոգաբարձութիւնը

սրանով յայտնում է ի գիտութիւն, որ նա վաճառում է նոր կառուցած դպրոցական շէնքի մօտ հողաբաժիններ։ Այդ հողաբաժինների մակերևոյթը կարելի է տեսնել հոգաբարձութեան դիւանատանը ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից. առաւօտեան ժամը 12-ից մինչև 3-ը։ Իւրաքանչիւր հողաբաժին կը վաճառվի աճուրդով, որի համար և կը յայտարարվի առանձին։ Ցանկացողները կարող են ներկայացնել խնդրագիրը հոգաբարձութեան անունով։

(21, 26, 31) 18. 4—4

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.